# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 19 (1269) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 3,2006
VOLUME 26, NO. 19 (1269) SATURDAY, JUNE 3, 2006

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՅԻՇԵՑԷՔ ՏԷՕՔՄԷՃԵԱՆՆ ՈՒ ՄԻՍԱՔԵԱՆԸ ...

Յունիս 6-ին Քալիֆորնիոյ տարածքին տեղի պիտի ունենան տարբեր պաշտօններու համար նախնական ընտրութիւններ, որոշելու համար տարբեր կուսակցութիւններու թեկնածուները՝ յառաջիկայ Նոյեմբերին կայանալիք ընդհանուր ընտրութիւններուն համար:

Նահանգային Խորհրդարանի 43-րդ ընտրաշրջանէն ներս, որ կ'ընդգրկէ Կլէնտէլի, Պըրպէնքի եւ Նորթ Հոլիվուտի հայաշատ շրջանները, Դեմոկրատ կուսակցութեան թեկնածուն դառնալու համար իրար դէմ կը մրցին Ֆրէնք Քինթերօ եւ Փոլ Գրիգորեան:

Քինթերոյի թեկնածութիւնը կը պաշտպանէ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան հովանիին տակ գործող Հայ Ամերիկեան Խորհուրդը եւ նաեւ բազմաթիւ անհատ հայեր, որոնք վարկ եւ հեղինակութիւն կը վայելեն մեր համայնքէն ներս: Իսկ, Փոլ Գրիգորեանին կը զօրակցի Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբը:

Վերջին օրերուն դաշնակցական գրիչներ եւ խօսնակներ դժբախտաբար սկսած են դարձեալ հանդէս գալ բաւական լկտի ոճով, Քինթերոյին զօրակցող հայերու հասցէին կատարելով գռեհիկ յայտարարութիւններ՝ զանոնք մեղադրելով նոյնիսկ որպէս «թուրքեր»՝ ոչ հայ թեկնածուին պաշտպանելնուն համար:

Մենք կը զօրակցինք Քինթերոյի թեկնածութեան գլխաւորաբար այն պատճառաւ, որ ան երկար տարիներ գործակցած է մեզի հետ, պաշտպանած է հայ համայնքի իրաւունքները եւ օգտակար հանդիսացած է շրջանի բնակչութեան: Գրիգորեան յարաբերաբար նոր է քաղաքական ասպարէզէն ներս եւ նուազ ծանօթ՝ մեր համայնքին: Այս ըսելով հանդերձ, անոր յաջողութիւնը մեզ անհանգիստ պիտի չընէ եւ որպէս հայեր մենք կրնանք միայն ուրախանալ քաղաքական մեծ ասպարէզ իր մուտքով եւ պատրաստ ենք գործակցելու իր հետ: Այս բոլորը նաեւ յայտնած ենք Պր. Գրիգորեանին:

Մեզի համար զարմանալի կը մնայ դաշնակցական անհատներու այս ջղագրգիռ վիճակը՝ ընտրութիւններու նախօրեակին: Ամերիկայի մէջ քուէարկութիւնները չեն նմանիր ոչ Հայաստանի ոչ ալ Պուրճ Համուտի ընտրութիւններուն: Հոս ժողովուրդի ձայնն է որ կը վճռէ արդիւնքները: Հնչակեան Կուսակցութիւնը յաճախ կը զօրակցի այս կամ այն թեկնածուին: Երբեմն մեր պաշտպանած անձիք կը յաջողին իսկ երբեմն ոչ, ու մենք շատ հանգիստ կը մօտենանք այս բոլորին: Նոյն մօտեցումը պարտաւոր են ցոյց տալ նաեւ մեր հակառակորդները, առանց անցնելու պատշաճութեան սահմանները:

Հոս յիշեցնենք բոլորին, որ 1982 Քալիֆորնիոյ կառավարիչի ընտ-

Շար.ը էջ 4

## ՆԱԽԱԳԱՀ ԺԱՔ ՇԻՐԱԿ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՎ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ Կ՛ԱԿՆԿԱԼԵՆ


Մինսկի խումբի միջնորդները Երեւանի մէջ կը ներկայացնեն իրենց յայտարարութիւնը

*Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրակ Երեքշաբթի, Մայիս 30-ին Էլիզէի պալատէն ներս ընդունելով Ատրպէյճանի առաջնորդ Իլհամ Ալիեւին, յայտնած է, որ անհրաժեշտ է կարելի եղածին չափ արագ լուծել Ղարաբաղի հակամարտութիւնը:*

*«Խաղաղ կարգաւորման գործընթացը այլընտրանք չունի, եւ խաղաղութիւնը անհրաժեշտ է Ատրպէյճանին, Հայաստանին եւ ամբողջ տարածաշրջանին», -ըսած է Ժաք Շիրակ: Ան վերահաստատած է ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու վերջերս կատարած միատեղ յայտարարութիւնը, որու համաձայն՝ «ժամանակն է, որ կողմերը համաձայնութեան գան հակամարտութեան կարգաւորման հիմնական սկզբունքներու շուրջ»:*

*Ժաք Շիրակ եւ Իլհամ Ալիեւ կարծիքներ փոխանակած են նաեւ տարածաշրջանէն ներս՝ մասնաւորաբար, Իրանի մէջ տիրող կացութեան շուրջ:*

*Իլհամ Ալիեւը, Փարիզի մէջ կը մասնակցէր ՆԱԹՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանին:*

*Անցեալ շաբթուայ ընթացքին ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահող երկիրներու բարձրաստիճան ներկայացուցիչները Երեւանի մէջ հանդիպել են՝ Ռոբերդ Քոչարեանի եւ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ յայ-*

Շար.ը էջ 4

## ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՈՆԿՐԷՍԱԿԱՆՆԵՐԸ Կ'ՈՒԶԵՆ ԻՄԱՆԱԼ ԴԵՍՊԱՆ ՃՈՆ ԷՎԸՆԶԻ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒՄԻ ՊԱՏՃԱՌԸ


Նորանշանակ դեսպան Ռիչըրտ Հօգլընտ

*Ամերիկեան Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տան 60 անդամներու ստորագրութեամբ նամակ մը յղուած է պետական քարտուղար Քոնտոլիզա Ռայսին՝ պարզելու համար, թէ ի՞նչու պաշտօնանկ եղած է Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Էվընզ, որ*

Շար.ը էջ 4

## ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԴԱՐՁԱԼ ՎՏԱՐՈՒԵՑԱՒ ԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԷՆ


Րաֆֆի Յովհաննիսեան դուրս կը հանուի իր կուսակցութեան գրասենեակէն

*Երեքշաբթի, Մայիս 30-ի առաւօտեան ժամը 10:00-ի Դատական Ակտերի Հարկադիր Կատարման (ԴԱՀԿ) ծառայութեան մօտ 10-15 ոստիկաններ ներխուժած են «Ժառանգութիւն» կուսակցութեան գրասենեակ եւ առանց համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու կուսակցութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանին եւ այլ անդամներուն ստիպած են ազատել շուրջ 12 տարի օգտագործած տարածքը:*

*Րաֆֆի Յովհաննիսեան ամբողջ գիշերը անցուած էր կուսակցութեանց գրասենեակէն ներս, որ կը գտնուի Յակոբ Պարոնեանի անուան Թատրոնի շէնքին մէջ: Ան օր մը առաջ մերժած էր ԴԱՀԿ-ի անօրինական պահանջը կատարել, սակայն, Երեքշաբթի օր, ԴԱՀԿ-ի կենտրոնական բաժնի պետ Վահրամ Ենոքեան բանակցած է Րաֆֆի Յովհաննիսեանի հետ: Բանակցութիւնները տեւած են շուրջ 2 ժամ, որու հիման վրայ կազմուած է արձանագրութիւն:*

*Րաֆֆի Յովհաննիսեան արձանագրութեան մէջ մասնաւորապէս շեշտած է, որ իրեն ու իր կողմնակիցներուն՝ ճնշմամբ ու իր կամքին հակառակ դուրս կը հանեն գրասենեակէն:*

*Րաֆֆի Յովհաննիսեան լրագրողներուն յայտնեց, որ հերթական*

Շար.ը էջ 4

## ՈՉ ԵՒՍ Է ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ


Հայկաշէն Ուզունեան

*Թէքէեան Մշակութային Միութեան հիմնադիր անդամներէն Հայկաշէն Ուզունեան ոչ եւս է: Ան իր մահկանացուն կնքած է Երեքշաբթի, Մայիս 26, 2006ին, Կիպրոսի իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:*

*Ան ծնած է Ատանա, 1920ին: Իր երկրորդական ուսումը ստացած է Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ եւ ապա շրջանաւարտ եղած է Պէյրութի Ֆրանսական համալսարանէն, վկայուելով ճար-*

Շար.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՒԸ ՇՈԿԻ ՄԷՋ Է

*ՀՀ Նախագահի ազգային անվտանգութեան հարցերի խորհրդական Գառնիկ Իսագուլեանի յայտարարութիւնը, թէ Ռոբերդ Քոչարեանը չի պատրաստւում առաջադրուել երրորդ անգամ եւ վարչապետի աթոռը զբաղեցնելու ծրագիր էլ չունի, կարելի է համարել Հայաստանի իշխանական վերնախաւի երկրորդ նշանակալից իրադարձութիւնը Արթուր Բաղդասարեանի հրաժարականից յետոյ:*

*Հրատապ է դառնում հարցը, թէ ի՞նչ է տեղի ունենում Հայաստանի իշխանութեան հետ: Եւ այդ հարցը պարապ չէ՝ եթէ ուշադիր հետեւենք այն տեղեկատուական պսփխոզին, որը ուղեկցում է իշխանութեան շարքերում տեղի ունեցող գործընթացին: Չէ որ նոյնիսկ անզէն աչքով կարելի է նկատել, որ իշխանութեան թէ ազդեցիկ գործիչները, թէ նրանց սպասարկող ԶԼՄ-ները, թէ «քաղաքագէտները» խուպոտ փողահարում են՝ Հայաստանում ոչինչ չի փոխուել եւ չի էլ կարող փոխուել: Բայց քանի որ երկրի քաղաքական կեանքում փոփոխութիւնները տեղի են ունենում օրաւօր, աւելի ու աւելի յաճախ է հաւաստւում, որ տեղի ունեցող ամէն ինչ իշխանութեան ազդեցիկ գործիչների ձեռքի գործն է:*

*Հայաստանում արդէն յիմար մարդիկ չկան: Եթէ այդքան շատ է յայտարարւում «յաւերժական հանդարտութեան» մասին, ուրեմն հանդարտութիւնը խախտուել է: Իսկ մնացեալ ամէն ինչ ընդամէնը ժամանակը կանգնեցնելու եւ իրերի վիճակը պահելու փորձ են: Քանի որ իրերի նման դրութիւնը առնչւում է բոլոր քաղաքացիների շահին, ապա հետաքրքիր կը լինէր հասկանալ, ինչու՞ են այդ բոլոր փորձերը պսփխոզ յիշեցնում, եւ ինչ ձեւով է իշխանութիւնը փորձում պահպանել երերուած կարգը:*

*Այդ իմաստով, ստիպուած ենք ընդունել, որ Հայաստանում իշխանութեան ճամբարի փաստացի փլուզումը պէտք է ունենայ ծանրակշիռ պատճառ: Եւ գլխաւոր պատճառը, մեր կարծիքով, իշխանութեան ազդեցիկ գործիչների եւ իշխանական ճամբարի հիմնական անդամների քաղաքական ընդունակութիւնների անհամապատասխանութիւնն է քաղաքական փոխուած պայմաններին: Իշխանութիւնը չգիտէ, ինչպէս պահել իրեն: Փաստացի, իշխանութիւնը պահելու միակ մեխանիզմ է դարձել շանտաժն ու առեւտուրը: Իշխանութիւնը չունի հասարակութեանն ասելու եւ առաջարկելու այլ բան: Այսինքն, կտրուկ պակասել է ներկայիս վերնախաւի քաղաքական միջոցների գործիքակազմը: Դա մէկ:*

*Բայց տեսանելի է եւս մէկ ծանրակշիռ պատճառ՝ որոշ քաղաքական ուժեր սկսում են զինուել աւելի արդիւնաւէտ քաղաքական տեխնոլոգիաներով, որոնց ազդեցութիւնը քաղաքական համակարգի վրայ, սկսում է խախտել Հայաստանում հիմնուած կարգը: Փաստացի, այսօր արդէն կարելի է հաւաստել, որ իշխանութեան բոլոր օղակները շոկի մէջ են, իրականութեան առաջ անզօրութեան զգացման հետեւանքով: Այդ շոկային վիճակը արդէն դրսեւորւում է հրապարակային ելոյթներում եւ մամուլի գնահատականներում:*

*Բաւական զարմանահրաշ է գործող կարգի ապոլոգետիկան: Այսպէս, դրա գլխաւոր ապոլոգէտ Հմայեակ Յովհաննիսեանը չի յոգնում պնդել, որ կարգը չի կարող փոխուել, քանզի այնքան է անբարոյական եւ կոռումպացուած, որ ոչինչ չի կարող դա փոխել: Համապատասխանաբար, առաջարկւում է համակերպուել դրա հետ եւ լեգալացնել գոյութիւն ունեցող իրավիճակը: Ընդ որում, Հմայեակը ոչ մի կերպ չի համոզւում, թէ ինչու՞ այդքան շատ սկսեց խօսել յատկապէս այժմ, երբ, ըստ իրեն, ոչինչ չի կարող խախտել իշխանութեան հանգիստը:*

---

***Հայաստանում արդէն յիմար մարդիկ չկան: Եթէ այդքան շատ է յայտարարւում «յաւերժական հանդարտութեան» մասին, ուրեմն հանդարտութիւնը խախտուել է***

---

*Այսինքն, իշխանութիւնը համաձայն է նոյնիսկ ինքն իրեն անուանել յանցաւոր եւ չարագործ, միայն թէ ոչ ոք չկարծի, թէ նա ընդունակ չէ պահել իրեն: Փաստացի, թերթերին եւ «քաղաքագէտներին» վճարում են, միայն թէ նրանք հասարակութեանը ներշնչեն (եւ ինչն աւելի կարեւոր է, իշխանութեան ճամբարի անդամներին էլ), որ իշխանութեան դէմ խաղ չկայ եւ պէտք է համակերպուել դրա հետ:*

*Տեղի է ունենում հետաքրքիր էֆեկտ: Խուճապահար իշխանութիւնը սկսում է ինքն իրեն դիմակազերծել, խորապէս հաւատալով այդ տեխնոլոգիայի արդիւնաւէտութեանը: Շատերը սկսում են լրջօրէն հաւատալ, որ միայն բացայայտ յանցագործութիւններով է հնարաւոր պահել իշխանութիւնը: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանում մօտենում է լուրջ դեստրուկցիաների ժամանակը: Կը գործի բնական էֆեկտը՝ իշխանութեան ճամբարի անդամները իրենք իրենց վրայ կը զգան ահաբեկութեան պտուղները: Դա արդէն զգացին գործարար պատգամաւորները: Իրենց մանդատները «տանիքի» կարգավիճակից արագ վերածուեցին սարկացման մեխանիզմի այն անձանց ձեռքին, ովքեր ժամանակին բաժանել էին այդ մանդատները: Յետոյ դա կը զգայ ընտրակեղծարարների կորպուսը: Եւ վերջինը կը լինեն իրաւապահ մարմինները, որոնց համբերութեան բաժակի մակարդակն արդէն այժմ բաւական բարձր է:*

*Այնպէս որ, ամէն ինչ նոր քաղաքական բեւեռի ձեռքին է, որը պատրաստ կը լինի Հայաստանում վերցնել իշխանութիւնը: Ներկայ իշխանութեան ռեսուրսը սպառուել է: Այն ընդամէնը փորձում է կանգնեցնել ժամանակը, ինչպէս դա սովորաբար անում են «փրփուրներից կախուողները»: Թերեւս, դա հասկացել է Նախագահ Քոչարեանը, հասկացնելով բոլորին, որ ինքն իր համար աւելի լուսաւոր հեռանկար է տեսնում, քան Հայաստանի իրողութիւնները: Նրա բոլոր զինակիցները չեն ուզում հաւատալ դրան, դրա համար էլ վախեցան նոյնիսկ թերթերում հրապարակել Քոչարեանի ակնարկները Գառնիկ Իսագուլեանի կատարմամբ: Դա նշանակում է, որ նրանք էլ են զգում այն, որ Հայաստանում վերնախաւի ժամանակը սպառւում է: Պարզապէս չգիտեն ինչ անել: Թերեւս, նորերը պէտք է նրանց ցոյց տան անելիքը:*

***ՄԵԼԻՔ ԱՒԱՆԵԱՆ***
***ԼՐԱԳԻՐ***

# «ԱՅԱԹՈԼԼԱՆԵՐԻՆ» ՍՊԱՍԵԼԻՍ

*Հայաստանի յաջորդ խորհրդարանում ճնշող մեծամասնութիւն են կազմելու գործարարները՝ ինչպէս «անկախ», այնպէս էլ տարբեր կուսակցական անուններով: Բնականաբար, նրանք գտնուելու են նախագահի գրպանում. արդէն ապացուցուեց, որ երկրի առաջին դէմքը կարող է գործարարին մտցնել ցանկացած ֆրակցիա եւ նոյն յաջողութեամբ այնտեղից հանել: Ընդդիմադիր գործարար Հայաստանում գոյութիւն չունի՝ հերը կ'անիծեն երկու րոպէում: Նոյնը Ռուսաստանում է. մէկը փորձեց՝ հիմա Սիբիրի հեռաւոր գաղութում բանուորների համար տաք շորեր է կարում: Իսկ ԱՄՆ-ում, օրինակ, գործարարների կէսը (այդ թւում, ի դէպ, Քըրք Քըրքորեանը) վերջին նախագահական ընտրութիւններում աջակցում էին ընդդիմադիր թեկնածու Ճոն Քերրիին: Սակայն ընտրութիւններում յաղթած Ճորջ Բուշ-կրտսերի մտքով չանցաւ դրա համար հետապնդել, ասենք, մեր նշանաւոր հայրենակցին: Եւ պատճառն այն չէ, որ ԱՄՆ նախագահը բարի, հանդուրժող եւ լայնախոհ մարդ է. պարզապէս ամերիկեան գործարարները կանոնաւոր մուծում են իրենց հարկերը եւ, հետեւաբար, պաշտպանուած են օրէնքով: Հայաստանում (եւ Ռուսաստանում) ոչ ոք պաշտպանուած չէ, սկսած ամենահաստավիզ օլիգարխից, վերջացրած՝ ամենախեղճ բոմժով:*

*Եւս մի հլու-հնազանդ եւ այս անգամ՝ բացարձակապէս ապաքաղաքական (զուտ «փողային») խորհրդարանի կերտումը, որին այսօր ձեռնամուխ են եղել մեր իշխանութիւնները, լղի է պոտենցիալ վտանգներով բոլորիս, այդ թւում՝ հենց իշխանութիւնների համար: Երբ հասարակութիւնը մարգինալացւում է եւ ամբողջութեամբ դուրս մղւում երկրի վերաբերեալ որոշումներ ընդունելու (իշխանութիւն ձեւաւորելու) դաշտից, երբ համընդհանուր ծախուածութիւնը, ստութը, կեղծիքը, ցինիզմը դառնում են կեանքի նորմ, երբ «պատասխանատու» եթերը լցուած է պաշտօնական «փչոցներով», վաղ թէ ուշ, գուցէ 1 տարուց, իսկ գուցէ՝ 10, դա բերում է պայթիւնի: Ի յայտ են գալիս մարդիկ, որոնք այդ ամենից հեռու են, չեն կեղտոտուել, վարում են ասքետիկ կեանք (կամ ձեւացնում են, որ այդպիսիք են), եւ յուսալքուած, ոչ մէկին չհաւատացող ժողովուրդը նետւում է նրանց գիրկը: Տեղի է ունենում մօտաւորապէս այն, ինչ կատարուեց հարեւան Իրանում 1978-ին:*

*Այդ սցենարի դէպքում մեր, պայմանականօրէն ասած, «այաթոլլաները» (մօտաւորապէս պատկերացրէք Ժիրայր Սեֆիլեանի կերպարը՝ չեմ պնդում, որ հենց ինքն է լինելու) հաստատում են կարծր համակարգ եւ շատացնում են արգելքները՝ հասարակութիւնը մաքրելու եւ առողջացնելու ձգտումով (ազնիւ կամ անազնիւ՝ այլ հարց է): Արդիւնքում՝ հասարակութիւնը չի մաքրւում, այսօրուայ բացայայտ ախտերը դառնում են թաքուն եւ աւելի վտանգաւոր, իշխանական համակարգը աւելի շատ է թաղւում կոռուպցիայի մէջ եւ, գումարած դրան, բացի պաշտօնական «փչոցներից», եթերում ոչ մի բան չի հնչում եւ թերթերում չի տպագրւում: Այսօրուայ իշխանաւորները գուցէ գնդակահարուեն, բայց դա փոքր սփոփանք է:*

*Ահա այդ ժամանակ երանի կը տանք այսօրուայ ռեժիմին:*

***ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ***
***«ԱՌԱՒՕՏ»***

# «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐԸ» ԵՐԿԸՆՏՐԱՆՔԻ ԱՌՋԵՒ

*Ըստ որոշ դիտորդների, «Օրինաց երկրից» առնէտավազգը կը շարունակուի առաջիկայում եւս, եւ եթէ մի քիչ էլ շարունակուի առնէտավազքը, մի գուցէ առնէտավազքի շնորհիւ ինքնամաքրուի այդ «Օրինաց երկիրը»:*

*Ցամենայն դէպս, համոզուած ենք, որ ինքը՝ Արթուր Բաղդասարեանը չի հետեւի Արտաշէս Թումանեանի օրինակին եւ չի լքի իր իսկ կուսակցութիւնը: Աւելին. շատ հնարաւոր է, որ առնէտավազքի վերջնագծի մատոյցներում սկսեն «Օրինաց երկիր» մտնել նորմալ ու կարգին մարդիկ (եթէ, իհարկէ, Արթուր Բաղդասարեանը զգայ նորմալ ու կարգին մարդկանց կարիք):*

*Այսինքն, բոլոր հնարաւորութիւնները կան, որ «Օրինաց երկիրը» վերջապէս դառնայ օրինաւոր ու կարգին կուսակցութիւն, մանաւանդ այն բանից յետոյ, երբ վերջնականապէս թօթափուի զանազան աթոռամոլ առնէտներից:*

*Բայց արդեօք ինքը՝ Արթուր Բաղդասարեանը կ'ուզենա՞յ օրինաւոր կուսակցութիւն ունենալ մի երկրում, որտեղ ոչ միայն նորմալ ընտրութիւններ տեղի չեն ունենում, այլեւ յոյս էլ չկայ, որ երբեւէ տեղի կ'ունենան:*

*Այսինքն, շատ հնարաւոր է, որ Արթուր Բաղդասարեանը չխրատուի եւ շարունակի իր կուսակցութիւնը համալրել ընտրակեղծիքների նոր մասնագէտներով: Եւ բացառուած չէ, որ Արթուր Բաղդասարեանն սկսի նորանոր առնէտներ բուծել:*

***ԽՄԲԱԳՐԱԿԱՆ***
***«ՏԱՐԵԳԻՐ»***

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

## ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ»-Ը ՊԱՏՐԱՍՏՒՈՒՄ Է ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Մայիս 29-ին «Օրինաց Երկիր» կուսակցութեան առաջնորդ Արթուր Բաղդասարեանը վերահաստատեց իր հրաժարականը, ինչը, ըստ օրէնքի, նշանակում է, որ նա այլեւս խորհրդարանի խօսնակը չէ: Ազգային Ժողովում կայացած մամլոյ ասուլիսում նա յայտարարեց նաեւ, որ մօտ ժամանակներս տեղի կ՛ունենայ իր գլխաւորած կուսակցութեան արտահերթ համագումարը, որտեղ կը ճշդուեն առաջիկայ անելիքները:*

*Այս ամիս «Օրինաց Երկիր»-ը դուրս եկաւ իշխող կոալիցիայից, իսկ Արթուր Բաղդասարեանը յայտարարեց իր հրաժարականի մասին:*

*«Պայքարելու ենք այն Հայաստանի ստեղծման համար, որը փայփայում ենք մեր երազների մէջ: Այն Հայաստանի ստեղծման համար, որտեղից մարդիկ չեն փախչի, այլ որտեղ մարդիկ կը գան, եւ հայրենադարձութիւնը կը լինի ոչ թէ սոսկ երազ, այլ կը լինի իրականութիւն: Եւ ես կարծում եմ, որ մեր համատեղ աշխատանքը, բոլոր խումբ-խմբակցութիւնների հետ, այլ քաղաքական ուժերի հետ միտուած է լինելու հենց այն Հայաստանի ստեղծմանը, որը կարեւորելու է ապագան: Որովհետեւ մեզ համար ապագայի, առաջընթացի իրական յոյսը շատ աւելի կարեւոր է, քան շատերի համար ոչինչ չտուող ներկան կամ ապրած անցեալի անցանկալի յիշողութիւնները», - այսօր լրագրողներին ասաց Արթուր Բաղդասարեանը:*

*Աշխատանքային օրուայ աւարտին Նախագահ Ռոբերդ Քոչարեանի մօտ գումարուեց խորհրդակցութիւն՝ Դաշնակցութեան եւ Հանրապետական Կուսակցութեան մասնակցութեամբ:*

*Ազգային Ժողովի խօսնակի պաշտօնի ամենահաւանական թեկնածուն՝ Տիգրան Թորոսեանը, որ նաեւ Բաղդասարեանի հրաժարականի մասին յայտարարութիւնից յետոյ ԱԺ նախագահի պաշտօնակատարն է, «Ազատութիւն» ռադիօկայանի հարցին, թէ ինչպէս է վերաբերում իր հնարաւոր առաջադրմանը խորհրդարանի խօսնակի պաշտօնին, ասաց. - «Որպէս հերթական պարտականութիւն»:*

## ԵՐԷԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ՕԵԿ-ԱԿԱՆ ԷԻՆ, ԱՅՍՕՐ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ,

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Տեղեկութիւններ կան, որ ՕԵԿ-ից պատրաստւում է դուրս գալ նաեւ խմբակցութեան ղեկավար Սամուէլ Բալասանեանն ու Յովհաննէս Մարգարեանը: Այսօր նրանք չեկան ԱԺ ճեպազրոյցներին, իսկ Գագիկ Մխէեանն ու Գագիկ Աւետեանը ոչ հաստատեցին, ոչ հերքեցին լուրերը: «Մենք այդպիսի բան չգիտենք»,- եղաւ նրանց պատասխանը: «Օրինաց Երկրի» մարզային կառոյցներից զանգուածային արտահոսքի մասին էլ իրենք տեղեկութիւն չունէին: Նրանք միայն նշեցին, որ ՕԵԿ-ին տասնամեայ պատմութեան ընթացքում շատերն են անդամակցել ու դուրս եկել, բայց հիմնական կորիզը մնացել է:*

*Երբ լրագրողներից մէկը ռեպլիկ նետեց, թէ «իսկ Սերգո՞ն», Գագիկ Աւետեանը նկատեց. «ՕԵԿ հիմնական կորիզը ժողովուրդն է»: ՕԵԿ-ական պատգամաւորները նաեւ չունէին տեղեկութիւն այն մասին, որ կուսակցութեան մարզային կառոյցների վրայ ճնշում են գործադրում, որպէսզի քանդեն կուսակցութիւնը:Հարցին, թէ ճնշումներ չկա՞ն իրենց մարզային կառոյցների անդամների վրայ, Գագիկ Աւետեանը պատասխանեց. «Մենք այդպիսի բաներ չենք անում, չգիտեմ»:*

*Ի դէպ, այսօր ճեպազրոյցների ժամանակ եւ «Ազգային Միաբանութիւնը», եւ ՕԵԿ պատրաստակամութիւն յայտնեցին չշարունակել վէճը, եզրափակել եւ չարձագանքել տարբեր կարգի յայտարարութիւնների:*

*Մինչ ՕԵԿ-ական շարքերը նօսրանում են, մանկավարժական շարքերը հանրապետականացւում են: «Հանրապետական կուսակցութիւնը որեւէ բնագաւառ հանրապետականացնելու, եւ այդ ոլորտի աշխատակիցներին կուսակցութեանն անդամագրելու խնդիր չունի»,- պատասխանելով «Ազատութեան» հարցին ասաց ԱԺ ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը:*

## ԵՐԵՒԱՆՈՒՄ ԿԸ ԿԱՌՈՒՑՈՒԻ ԱՐԱԳԸՆԹԱՑ ՄԱՅՐՈՒՂԻ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:Մայրաքաղաքում կը կառուցուի Հայաստանում առաջին արագընթաց ավտոմայրուղին: Այդպիսին կը դառնայ Ծովակալ Իսակովի պողոտայի «Հրազդան» մարզադաշտից մինչեւ «Զուարթնոց» օդանաւակայանի խաչմերուկը ընկած հատուածը:*

*Ըստ Երեւանի քաղաքապետարանի շինարարութեան, բարեկարգման եւ կոմունալ տնտեսութեան վարչութեան պետ Ֆրունզէ Բասենցեանի՝ Ծովակալ Իսակովի պողոտայի նշուած հատուածը կարող է հեշտութեամբ վերածուել 7 մետր լայնութեամբ երկկողմ արագընթաց մայրուղու:*

*Քաղաքապետարանում կարծում են, սակայն, որ Փարաքարի հատուածում գտնուող խաղատների տէրերի հետ բարդութիւններ չեն ծագի:*

*Ի դէպ, 2006-ին Երեւանի քաղաքապետարանը նախատեսում է իրականացնել 5,1 մլրդ դրամի շինարարական, բարեկարգման եւ վերանորոգման աշխատանքներ:*

*Քաղաքապետարանում հրաւիրուած ասուլիսում պարոն Բասենցեանը նշել է, որ միայն փողոցների ասֆալտապատման համար յատկացուել է 2,4 մլրդ դրամ, իսկ վթարային 11 շէնքերի ամրացման համար՝ 755 մլն դրամ: Այս տարի կ՚իրականացուեն մայրաքաղաքի 13 փողոցների արտաքին լուսաւորման աշխատանքներ: Ըստ Բասենցեանի՝ մինչեւ տարեվերջ կը բարեկարգուի նաեւ Հրազդանի կիրճը՝ Դաւիթաշէնի կամրջից մինչեւ Արաբկիրի այգիներն ընկած հատուածը:*

## ՀՌԱՀ-Ը 12-ՐԴ ԱՆԳԱՄ ՄԵՐԺԵՑ »Ա1+«-ԻՆ




ՀՌԱՀ-ի նախագահ Գրիգոր Ամալեան եւ իշխանութիւններու մէկ այլ կամակատար կը քուէարկեն ընդդէմ «Ա1»-ի

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:«Երբեւէ երազանք չեմ ունեցել «Ա1+»-ին ալիք տալու, ի՞նչ է նշանակում՝ կորցրեց հնարաւորութիւնը»,- զայրացած յայտարարեց ՀՌԱՀ նախագահ Գրիգոր Ամալեանը FM 90,3 ՄՀց եւ FM 90,7 ՄՀց ռադիոկապուղիների մրցոյթներից յետոյ, երբ յայտնի դարձաւ, որ 12-րդ անգամ «Ա1+»-ը հնարաւորութիւն չի ունենալու նոյնիսկ ռադիոեթերում լինելու:*

*«2» գնահատելով «Ա1+»-ին եւ «4»՝ նրա մրցակիցներին, Գրիգոր Ամալեանը հերթական անգամ «արդարացի» որակեց իրենց որոշումը՝ այս անգամ էլ միաձայն կապուղի տալով հանրութեանը անյայտ «Ուլիս-Մեդիա» եւ «Ռադիօ-Պրօ» ՍՊԸ-ներին: Վարկանիշային քուէարկութեամբ «Ա1+»-ը հաւաքեց ընդամէնը՝ 22, իսկ նրա մրցակիցները՝ 29 միաւոր: «Այդ հարցը չպիտի ծագէր»,- ասաց Գրիգոր Ամալեանը, երբ լրագրողներից մէկը փորձեց պարզել, թէ ինչո՞ւ «Ա1+»-ն արժանացաւ նրա «2»-ին:*

*Ի դէպ, «Ռադիօ-Պրօ»-ի ներկայացուցիչներն այսօր անգամ ՀՌԱՀ չէին եկել մրցոյթի արդիւնքներն իմանալու համար՝ հաւանաբար վստահ լինելով, որ յաղթողն իրենք են լինելու:*

*«Ես լաւ եմ զգում, որ յաղթել ենք մենք եւ մրցոյթն էլ արդար եմ համարում»,- մրցոյթից յետոյ յայտարարեց «Ուլիս-Մեդիա» ՍՊԸ գլխաւոր պրոդիւսեր Նորայր Մխոեանը:*

*Ալեք Մանուկեան 5 հասցէում գրանցուած ընկերութեան ներկայացուցիչը վերստին ժխտեց իրենց առնչութիւնը ՀՀՌԸԽ (Պետական հեռատեսիլի Մ.) նախագահ Ալեքսան Յարութիւնեանի կամ «Նաիրի-կինոթատրոնի»՝ «Ուլիս» ՍՊԸ-ի հետ, քանզի իրենք պարզապէս «պայմանագրով տարածք են վերցրել ռադիոտանը»:*

*Թէեւ չկարողացաւ հիմնաւորել, հնարաւո՞ր է «առանց կապերի» տարածք վարձակալել ռադիոտան շէնքում:*

## «ԻՐԱՒՈՒՆՔԸ» ԴԱՏԻ Է ՏԱԼԻՍ ՍԱՇԻԿ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Իրաւունք» շաբաթաթերթը պատրաստւում է դիմել դատախազութիւն՝ պահանջելով քրէական գործ յարուցել լրագրողի գործունէութիւնը ԱԺ-ում խոչընդոտելու փաստի առթիւ:*

*Յիշեցնենք, որ երկու օր առաջ ԱԺ պատգամաւոր, պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի եղբայր Ալեքսանդր Սարգսեանը իրեն «դուր չեկած» նիւթի համար հայհոյել եւ սպառնացել էր «Իրաւունքի» թղթակից Թագուհի Թովմասեանին, եւ փորձել պարզել Թագուհու գրած լուրի աղբիւրը:*

*«Իրաւունք-հետաքննութիւն» յաւելուածում ՍԻՄ փոխնախագահ, «Իրաւունք» թերթի խմբագրական խորհրդի քարտուղար Հայկ Բաբուխանեանը տեղեկացրել է, որ ինքն է տեղեկատուութիւնը տրամադրել Թագուհի Թովմասեանին, եւ եթէ Սաշիկ Սարգսեանը հարց ունի՝ կարող է դիմել իրեն:*

*Իսկ պատգամաւորի արարքում յանցակազմ կայ, եւ թերթի խմբագրակազմը յուսով է, որ քրէական գործ կը յարուցուի.*

*«Դժուար է դատախազութիւնից, կամ դատարաններից ինչ-որ ակնկալիքներ ունենալ, բայց քայլ անել պէտք է»,-ասաց թերթի խմբագիր Յովհաննէս Գալաջեանը:*

*Դատական հարցերով կը զբաղուի թերթի ներկայացուցիչ, փաստաբան Աշոտ Աբգարեանը, որն արդէն նիւթերն է նախապատրաստում եւ հաւանաբար վաղը դրանք կը ներկայացնի դատախազութիւն:*

*Ի դէպ, լրատուամիջոցները պատրաստւում են համատեղ յայտարարութեամբ հանդէս գալ, որով կը դատապարտեն լրագրողի մասնագիտական գործունէութեանը խոչընդոտելու փորձերը:*

*Իհարկէ, կարելի է կանխատեսել, թէ քանի լրատուամիջոց կը ստորագրի յայտարարութեան տակ եւ քանիսը՝ ոչ, եւ ում ընդհանրապէս կ՚առաջարկուի ստորագրել. եւ հերթական անգամ լրագրողական դաշտը կը կիսուի մօտաւորապէս այնպէս, ինչպէս դա տեղի ունեցաւ «Ա1+»-ի եթերազրկման վերաբերեալ յայտարարութեան ժամանակ:*

## «ԱՐՄԱՒԻԱ»-ՈՒՄ ԴԵՌԵՒՍ ՉԵՆ ՀԱՇՈՒԱՐԿԵԼ ՎՆԱՍՆԵՐԸ

*«Մենք շատ մեծ վնասներ ենք կրել՝ երկու ինքնաթիռ ենք կորցրել: Սրանք բարդ հաշուարկներ են, այնպէս որ դեռեւս չենք կարող ասել, թէ որքան է կազմում մեր վնասը», - «Ազատութիւն» ռադիօկայանին այսօր ասաց «Արմաւիա» ընկերութեան գլխաւոր տնօրէն Նորայր Բելուեանը: Ան նաեւ ասաց, որ վթարից յետոյ ուղեւորների շրջանում ստեղծուած խուճապային իրավիճակը «տեւել է ընդամէնը մէկ շաբաթ - 10 օր». - «Դրանից յետոյ ամէն ինչ կարգաւորուել է: Մարդիկ այլեւս չեն վախենում: Իմ անձնական կարծիքն է, որ խուճապային վիճակ չկայ»:*

## ԼՈՒՐԵՐ

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԸ ՃԱՐՄԱՆՈՒՄ Է ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Մայիս 25-ին Երեւանում քննարկւում էր «Human Rights Watch» կազմակերպութեան տարեկան զեկոյցը, որում մեծ տեղ էր յատկացուած Հայաստանի խնդիրներին:*

*Դատելով Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարուեան (ԱԳՆ) պատասխանից «Human Rights Watch»-ին, մասնաւորապէս մամուլի ազատութեան առումով «որեւէ խնդիր չկայ Հայաստանում»: ԱԳՆ նամակում գրուած է, որ կազմակերպութիւնը փաստական սխալներ է թոյլ տուել՝ խօսելով Հեռուստատեսութեան եւ Ռադիոյի Ազգային Յանձնաժողովի անկախութեան եւ ընդհանրապէս յաճախութիւնների մրցոյթների փաստական կողմի հետ կապուած:*

*ԱԳՆ այս մեղադրանքին, քննարկմանը՝ հեռախօսային կապի միջոցով Նիւ-Եորքից մասնակցող «Human Rights Watch»-ի ներկայացուցիչ Ռէյչըլ Դենվերը հարցով պատասխանեց: «Ազատութիւն» ռադիոկայանի հաղորդմամբ այդ պատասխանի բովանդակութիւնը, մօտաւորապէս հետեւեալն էր.*

*«ԱԳՆ-ն իր պատասխանի մէջ բաւական մանրամասն ներկայացրել է մեր կազմակերպութեան թոյլ տուած փաստական սխալները հեռուստայաճախականութեան համար անցկացուող մրցոյթների վերաբերեալ, բայց այդպէս էլ չի պատասխանել մի կարեւոր հարցի. ինչո՞ւ Հայաստանում մինչ օրս չկայ անկախ էլեկտրոնային լրատուամիջոց»:*

*Տիկին Դենվերն ընդհանրապէս ասաց, որ շատ զարմացած էր ԱԳՆ-ի այդ պատասխանից, քանի որ առաջին անգամ է, որ որեւէ երկրի կառավարութիւն այդ կերպ է արձագանքում «Human Rights Watch»-ի տարեկան զեկոյցին:*

*Ի դէպ, յիշեցնենք, որ ԱԳՆ նամակում՝ ուղղուած «Human Rights Watch»-ին, գրուած էր, որ կապուղիների մրցոյթ յայտարարւում է, իսկ «Ա1+» հեռուստաընկերութիւնը դրանց չի մասնակցում:*

# ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ Կ'ԱԿՆԿԱԼԵՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*տարարեցին, որ տարածաշրջանէն կը մեկնին՝ «յուսալով եւ ակնկալելով, որ յառաջընթաց տեղի կ՚ունենայ»:*

*Միջազգային միջնորդներու պատուիրակութիւնը ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ՝ Մթիւըն Մաննի, Պերնար Ֆասյէի եւ Եուրի Մերզլեակովէն բացի, ներկայացուած էր աւելի բարձր մակարդակով՝ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի եւ Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւններու բարձրաստիճան պաշտօնեաներով (Ռուսաստանի Արտաքին Գործոց Նախարարի տեղակալ Գրիգորի Կարասին, Ֆրանսայի Արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչ, դեսպան Փիէր Մորէլի, Միացեալ Նահանգներու Պետական քարտուղարի տեղակալ Տէնիէլ Ֆրիտ), երեւանեան իրենց հանդիպումներու աւարտին լրագրողներուն բաժնեցին միայն համատեղ յայտարարութիւն մը:*

*Յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած էր,- «Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման անհրաժեշտութիւնը եւ այն, որ հիմա ժամանակն է, որպէսզի կողմերը համաձայնութեան գան խնդրի կարգաւորման հիմնական սկզբունքների շուրջ»:*

*«Այսպիսի համատեղ առաքելութիւնը բացառիկ դէպք է: Այն պէտք է մատնացոյց անի այն լրջութիւնը, որով մենք վերաբերւում ենք այս հարցին եւ մասնաւորապէս այն համոզմունքը, որ մենք գտնւում ենք մի այնպիսի կէտում, երբ փոխշահաւէտ համաձայնութեան կայացումը իրագործելի է»:*

*Փաստաթղթին մէջ շեշտուած է նաեւ, որ «հակամարտութիւնը չի կարող ունենալ որեւէ այլ լուծում, քան խաղաղ լուծումն է». - «Եւ աւելին, երկու երկրներն էլ պէտք է իրենց ժողովուրդներին նախապատրաստեն խաղաղութեան եւ ոչ պատերազմի»:*

*«Թէ ինչ տեղի կ՚ունենայ հիմա, դա կ՚որոշեն Հայաստանն ու Ատրպէյճանը: Մենք մեկնում ենք՝ յուսալով ու ակնկալելով, որ կը լինի առաջընթաց», - կ՚եզրափակէ միջնորդներու յայտարարութիւնը:*

*Համանախագահները չպատասխանեցին լրագրողներու հարցերուն: դիւանագիտական կորպուսի բարձրաստիճան ներկայացուցիչներ:*

# ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԴԱՐՁԱԼ ՎՏԱՐՈՒԵՑԱՒ

*Շարունակուած էջ 1-էն*

*«այս յանցագործութեան մասին» համապատասխան գրութիւններ ուղարկած է գլխաւոր ոստիկանապետին, դատախազին, Մարդու Իրաւունքներու Պաշտպանին եւ աւելցուց. «ԴԱՀԿ ծառայողները դատարանի վճիռն օրէնքի շրջանակներում իրականացնելուց յետոյ, 6 ժամուայ ընթացքում այլ ատեանների հրահանգով շրջադարձում կատարեցին: Մի գիշերուայ մէջ օրէնքը կամայականօրէն փոխուել է անօրինական տարբերակի: Սա տղամարդուն անվայել արարք է: Այս քայլերը վախից դրդուած են»:*

*«Եթէ այս բռնութիւնները Ռոբերդ Քոչարեանին ներկայացրած իմ նամակի հարցադրումների հետեւանքն են, ապա դա նախագահին վայել չէ՝ խայթոցներով, գրասենեակներ փակելով հակազդեցութիւն ցոյց տալ»,- աւելցուց Րաֆֆի Յովհաննիսեան:*

# ՅԻՇԵՑԷՔ ՏԷՕՔՄԷՃԵԱՆՆ ՈՒ ՄԻՍԱՔԵԱՆԸ ...

*Շարունակուած էջ 1-էն*

րութիւններուն դաշնակցութիւնը ոչ միայն չպաշտպանեց Ճորճ Տէօքմէճեանին ընդդէմ Թոմ Պրատլիի, այլ նաեւ, բաւական սուր պայքար մղեց հայազգի թեկնածուին դէմ: Նոյնը պատահեցաւ 2000-ին, երբ դարձեալ այս՝ 43-րդ ընտրաշրջանէն ներս, ան պաշտպանեց Տարիօ Ֆրոմըրին ընդդէմ Կրէկ Միսաքեանի:

Հետեւաբար, լաւ պիտի ըլլար, որ Հ.Յ.Դ.-ի հայդատականները լաւ ծանօթանային իրենց կուսակցութեան քաղաքական անցեալին, նախ քան որ անպատասխանատու եւ անզամ ծիծաղելի մեղադրանքներով, մոլորեցնէին իրենց ընթերցողներն ու ունկընդիրները:

**ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼ ՉՄԱՍՆԱԿՑԵԼ ՊԱՔՈՒՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՀ ՆԻՍՏԻՆ

*ԵՐԵՒԱՆ, 30 ՄԱՅԻՍԻ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Հաշուի առնելով այն, որ ԱՊՀ Պաշտպանութեան Նախարարներ ի խորհրդի քարտուղարութիւնը չկարողացաւ Ատրպէյճանի իշխանութիւններից ՀՀ պաշտպանութեան նախարարութեան պատուիրակութեան անդամների անվտանգութեան երաշխիքներ ստանալ, որոշում է ընդունուել չմասնակցել Մայիսի 31-ին Պաքւում տեղի ունեցող ԱՊՀ ՊՆԽ նիստին: Այդ մասին գրաւոր տեղեկացուել է ԱՊՀ ՊՆԽ քարտուղարութիւնը:*

*«Սոյն փաստը կրկին անգամ վկայութիւն է, որ Ատրպէյճանը ի վիճակի չէ կատարել իր պարտաւորութիւնները՝ ապահովել իր իսկ տարածքում կազմակերպուող միջազգային միջոցառման մասնակիցների անվտանգութիւնը: ԱՊՀ ՊՆԽ քարտուղարութիւնն էլ իր հերթին պարտաւոր է ստեղծել նիստի մասնակցութեան հաւասար պայմաններ ԱՊՀ մասնակից բոլոր պետութիւնների համար: Մենք ակնկալում ենք ԱՊՀ Պաշտպանութեան Նախարարների Խորհրդի պաշտօնական վերաբերմունքը կատարուածի կապակցութեամբ»,- ասուած է ՀՀ պաշտպանութեան նախարարութեան յայտարարութիւնում, որ «ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ»-ին է տրամադրել ՀՀ պաշտպանութեան Նախարարի մամլոյ քարտուղար, գնդապետ Սէյրան Շահսուվարեանը:*

# ԿՈՄՊՈՏԻԶՈՐ ՌՈԲԵՐԴ ԱՄԻՐԽԱՆԵԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՕՐՀՆԵՐԳԻ ԻՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Օրհներգի փոփոխութեան մասին խօսակցութիւններին Մայիս 30-ին յաջորդեց առաջին գործնական քայլը: Կոմպոզիտոր Ռոբերդ Ամիրխանեանը այսօր ԵՊՀ-ի կենտրոնական դահլիճում առաջին անգամ ներկայացրեց օրհներգի սեփական տարբերակը:*

*Լեփ-լեցուն դահլիճը կամերային երգչախմբի կատարմամբ յոտնկայս լսեց դեռեւս տարբերակ հանդիսացող օրհներգը, որը սկսւում է ներկայիս հիմնի բառերով:Բայց այս անգամ ոչ թէ ազատ, անկախ , այլ. «Մեր հայրենիք. բիւր դարեր կանգուն ես Սասնա ոգով դիւցազնական... »:*

*Կոմպոզիտորն ասում է , որ երաժշտութիւնն իր տարիների աշխատանքն է եւ մինչեւ վերջին պահը մշակուել, յղկուել է : Բառերի հեղինակը եւս Ռոբերդ Ամիրխանեանն է: Հիմներգի սեփական տարբերակ ներկայացնելը, երգահանի համոզմամբ, հայրենիքի նկատմամբ սիրոյ արտայայտութիւն է.միայն այսպէս կարելի է ապացուցել, որ անտարբեր չես սեփական երկրի նկատմամբ ու ուզում ես նրան տալ արժանի կեցուածք:*

*«Այսօր ես ընդամէնը կիսւում եմ այն մարդկաց հետ, ովքեր հետաքրքրուած են , թէ արդեօք մենք որեւէ բան անում ենք, թէ ոչ: Իմ առջեւ մի քանի խնդիր կար դրուած, անպայման գտնել այն վերելքի ոգին. կանչը: Եւ շատ դժուար է մէկուկէս րոպէի ընթացքում ստեղծել մի սիմվոլ, որը յաւակնութիւն ունի տարիներ շարունակ ապրելու»,-ասում է երգահանը:*

*Անդրադառնալով խորհրդային Հայաստանի հիմնի երաժշտութիւնը վերականգնելու հարցին՝ կոմպոզիտորը նկատեց, որ դա երկրորդ հանրապետութեան խորհրդանիշն էր:*

# ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՈՆԿՐԷՍԱԿԱՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*հրապարակային յայտարարութիւններով ճանչցած է Հայոց Ցեղասպանութիւնը:*

*Իրենց նամակին մէջ գոնկրէսականները պաշտպանած են դեսպանին, շեշտելով, որ «ցեղասպանութիւն» բառը «ճշգրտօրէն կը բնորոշէ 1915 թուականի աղէտալի իրադարձութիւնները»:*

*«Անցեալ տարի օգտագործելով ճշգրիտ բառը, դեսպանը ընդամէնը կը հիմնուէր մեր ղեկավարներու նախորդ յայտարարութիւններու, ինչպէս նաեւ բազմաթիւ աշխարհահռչակ գիտնականներու բազմիցս արտայայտած կարծիքներու վրայ», - ըսուած է նամակին մէջ:*

*«Ես լրջօրէն մտահոգուած եմ դեսպան Էվըրս ի վաղաժամ ետ կանչելու հարցով եւ յոյս ունիմ, որ այդ կապուած չէ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ անոր կատարած մեկնաբանութիւններուն հետ», - «Ֆրանս Փրէս» գործակալութեան յայտնած է նամակը ստորագրող գոնկրէսականներէն Էտ Մըրքի:*

*Անցեալ շաբթուայ ընթացքին նախագահ Ճորճ Պուշ Հայաստանի մօտ նոր դեսպանի պաշտօնին համար Ծերակոյտին առաջարկած է Ռիչըրտ Հօգլընտի անունը: Ան ներկայիս Ամերիկայի դեսպանն է Տաճիկիստանի մօտ:*

*Վերջին ամիսներուն հայկական մամուլի մէջ եղան կանխատեսումներ, թէ Դեսպան Ճոն Էվըրս ետ պիտի կանչուէր Հայկական Ցեղասպանութեան շուրջ իր կատարած յայտարարութիւններուն պատճառաւ:*

# ՈՉ ԵՒՍ Է ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*տարագիտութեան մէջ: Հայկաշէն Ուզունեան եղած է գործօն անդամներէն մին է ՀԲԸՄի եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան: Երկար տարիներ, ան մաս կազմած է անոնց կեդրոնական Վարչութիւններուն: Նաեւ, 1946-ական թուականներուն, ան անդամակցած է Ներգաղթի կոմիտէին: Իբրեւ ազգային գործիչ, 1966 թուականին հաստատած է իր անունը կրող գրական մրցանակ մը, այդ գծով սատար հանդիսանալու համար սփիւռքահայ ու հայրենի գրողներու ստեղծագործական աշխատանքներուն:*

*Հեղինակն է երեք գիրքերու՝ «Արմենական Կուսակցութիւնը (1985, Պէյրութ), «Ժամանակակից Դէմքեր, որոնց հետ ապրեցայ ու գործեցի» (1994 Պոսթոն) եւ «Յուշամատեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան» (2004, Երեւան):*

*Հայկաշէն Ուզունեան արժանացած է «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանին 1990 թուականին, ՀԲԸՄի «Ալեք Մանուկեան» մրցանակին եւ Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի» պատուանշանին:*

# ԱՆՏԱ՛ՌԸ, ՊՐՆ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

«Ասպարէզ» օրաթերթի Ուրբաթ, Մայիս 19, 2006 թուի երկրորդ էջով հրատարակուած է «Անտա՞ռը, թէ Շիւղը» խորագրով յօդուած մը, գրուած Պրն. Կարօ Գասպարեանի կողմէ: Սոյն յօդուածով ան կ'անդրադառնայ «Մասիս» շաբաթաթերթի Ապրիլ 29, 2006 թիւով լոյս տեսած «Ապրիլ եւ Տեսնել, խօսիլ թէ՞ Աղմկել» խորագրով մեր յօդուածին: Իր խորհրդածութեանց միտք բանին կարելի է տալ մէջբերելով հետեւեալ տողերը. «Յարութ Տէր Դաւիթեանի մօտ բացակայ է դէպքերն ու երեւոյթները իրենց պատմական պարունակին մէջ տեսնելու եւ վերլուծելու կարողութիւնը... Ո՞րը աւելի կարեւոր է, անտա՞ռը, թէ շիւղը: Յարութ Տէր Դաւիթեանին համար, պատասխանը երկրորդն է: Ի վերջոյ, հարցը կը կայանայ տեսնելու, մանաւանդ՝ ճի՛շդ ու ամբողջակա՛ն պարունակին մէջ տեսնելու կարողութեան մէջ»:

Պատասխանելով Պրն. Գասպարեանին, նախ կ'ուզենք գնահատել զինք, մեր յօդուածը կարդացած ըլլալուն համար եւ ժամանակ տրամադրած պատասխանելու: Մենք կը մնանք համոզուած որ որակաւոր երկխօսութիւնը միշտ իր դրական դերը կ'ունենայ հաւաքականութեան մը յառաջդիմութեան մէջ: Կ'ուզենք նաեւ վստահեցնել Պրն. Գասպարեանը, որ մենք, որպէս պատմութեան անյագ ուսանող, միշտ ջանացած ենք մեր լաւագոյնը ընել «դէպքերն ու երեւոյթները իրենց պատմական պարունակին մէջ տեսնելու եւ վերլուծելու», եւ մեր ուշադրութեան եւ մտահոգութեան կորիզը միշտ եղած է անտառը (ազգը) եւ ոչ թէ շիւղը կամ ծառը (դէպք, անհատ, կուսակցութիւն, եւայլն): Ճիշտ այս պատճառաւ հպանցիկ պիտի անդրադառնամ Պրն. Գասպարեանի նշած կարգ մը «շիւղ»երուն, կեդրոնանալու համար «անտառ»ին վրայ:

Նախ մեզի կը վերագրուի «գիւտ» մը, որ մեր յօդուածին մէջ չէինք յաւակնած կատարած ըլլալ, «Յարութ Տէր Դաւիթեան այս ձեւով կարծէք գիւտ մը կատարած է ներկան 40 տարի առաջուան բաղդատելով եւ... տարբերութիւն տեսնելով: Այսինքն, ինչ հրաշք... ու յաջորդող 24 տողերուն մէջ կը փորձէ համոզել ընթերցողը, որ մենք «կը մոռնանք հարցերը իրենց իսկական պարունակին մէջ տեսնելու» եւ այդ ընելու «կարողութիւնը չունինք»: Մինչդեռ եթէ քիչ մը աւելի ուշադիր կարդացած ըլլար յօդուածը, պիտի տեսնէր որ այդ բոլորը երկու տողով ըսած ենք. «Կը նշանակէ թէ բաւական ճամբայ կտրած ենք»: Ինք կը մանրամասնէ այդ կտրուած ճամբան, փորձելով համոզել ընթերցողը, որ մենք ատոր «կարողութիւնը» չունինք:

Երկրորդ, շփոթ կայ իր չգիտցածին ու գիտցածին մէջ: Ան կ'ըսէ. «չենք գիտեր թէ ի՞նչ մամլոյ ասուլիսի կ'ակնարկէ յօդուածագիրը»: Մեր յօդուածի ուշադիր ընթերցողը պիտի յստակ տեսնէր որ Թուրք մտաւորական եւ հրատարակիչ Ռակըպ Զարաքօլուի մամլոյ ասուլիսին մասին է խօսքը: Ան կրնար հարցնել «Ասպարէզ»ի եւ «Հորիզոն»ի պատասխանատուներուն, որոնք հրաւիրուած էին այդ ասուլիսին եւ ներկայացուցիչ ուղարկեցին (երբ «թեքնիք» պատճառներով ասուլիսի վայրը տեղափոխուեցաւ հայ կաթողիկէ եկեղեցւոյ սրահը): Իսկ իր գիտցածը, թէ Յարութ Տէր Դաւիթեան կամ «Մասիս» «չի փայլիր նոյնիսկ Հայաստանի պետական անձնաւորութիւններու այցելութեան առթիւ տրուած մամլոյ ասուլիսներուն իր ներկայութեամբ»- սխալ տեղեկութիւններու վրայ հիմնուած է: Եթէ ինք կը սպասէր որ Յարութ Տէր Դաւիթեանը ամէն մամլոյ ասուլիսի ներկայ ըլլայ, իր սպասումը անտեղի ու անգործնական է, որովհետեւ ոչ ան եւ ոչ ալ ուրիշ ոեւէ անհատ այդ մենաշնորհը ունի: «Մասիս» իր յարմար դատած ներկայացուցիչները կ'ուղարկէ զանազան մամլոյ ասուլիսներու:

Երրորդ, անտառը թէ շիւղը կարեւորելու դժուարութեան մէջ կ'իյնայ ինք, երբ կը գրէ թէ մեր նշած պատկերներէն զատ ուրիշ բան չունէ՞ինք փոխանցելու: Փոխանցած էինք: Եթէ քիչ մը աւելի ուշադիր կարդացած ըլլար մեր յօդուածը պիտի տեսնէր թէ գրած ենք, «մեզի համար առաջնահերթութիւնը այս ֆոնտին ընդմէջէն Պրն. Զարաքօլուի ընձեռուած զօրակցութիւնն է, առանց շուինդի կամ աղմուկի»: Թուրքիոյ մէջ, հայանպաստ գիրքերու թրքերէնով լոյս ընծայման երեւոյթը մենք բարձր կը գնահատենք ու համոզուած ենք որ պէտք է քաջալերել այս երեւոյթի նախաձեռնողները որպէս զի Թուրք հասարակութեան մատչելի դառնան պատմական իրականութիւնները: Եթէ ստիպուած պիտի ըլլանք բաղդատական մը ընել այս երեւոյթին եւ օրինակի համար թրքական հիւպատոսարաններու առջեւ կազմակերպուած ցոյցերուն, մեր համոզմամբ առաջինը շատ աւելի արդիւնաւէտ է, թէեւ Պրն. Գասպարեան «փոքր արդիւնք» կը համարէ «քանի մը Թուրք գրողներու կամ մտաւորականներու կողմէ հայկական ցեղասպանութեան առաւել կամ նուազ քաջաբար անդրադառնալը: 21 դատավարութիւններէ անցած եւ 3 տարի բանտարկուած Պրն. Զարաքօլուի հարց պէտք է տալ թէ ի՞նչ պէտք ունի «փոքր արդիւնք»ի համար այդ բոլորէն անցնիլ: Ժամանակը ցոյց կու տայ թէ որո՞ւն տեսակէտը աւելի հիմնական ու խորքային է:

Մենք մեր յօդուածով ուրիշ մտքեր ալ փոխանցած էինք, ինչպէս 4րդ եւ վերջին պատկեր մը, հայ ուսանողներու հսկայ ցոյցին Պրն. Զարաքօլուի սրտառուչ ելոյթը, զոր Պրն. Գասպարեան յարմար տեսած է շրջանցել: Մենք փոխանցած էինք նաեւ այն տխուր երեւոյթը որ «մարդիկ աւելի հետաքրքրուած են ցուցադրականութեամբ, քան խորքային զարգացումներով: Եւ պատճառը մեր առաջնահերթութեանց յստակացման պակասն է: Հատուածական նեղմիտ մտածողութիւնը ազգային առողջ մտածողութենէն վեր դասելու մոլեգին մարմաջն է»: Մենք փոխանցած էինք նաեւ այն միտքը թէ Ապրիլեան ոգեկոչումները սգահանդէսներ պէտք չէ ըլլան, այլ՝ «մահը յաղթահարողի հանդէս: Ինքնավստահութեամբ ապագան դիմագրաւելու հանդէս»: Որպէս զի սխալ վերագրում չըլլայ, շեշտենք որ «գիւտ»եր չեն մեր ըսածները, այլ անդրադարձ մեր իրականութեան զանազան երեսներուն: Եթէ Պրն. Գասպարեանը թերթատեր «Մասիս»ի Ապրիլ 29ի թիւը, պիտի տեսնէր որ հոն աշխարհասփիւռ Ապրիլեան ոգեկոչումներու լուրերու եւ յօդուածներու անտառ մը կար: Բայց այս անտառին մէջէն ինք ուզած էր տեսնել միայն շիւղ մը (մեր յօդուածը) եւ դժբախտաբար չէր ուզած կամ չէր կարողացած զայն իր ճիշտ «պարունակին մէջ տեսնել եւ վերլուծել»: Հոն արծարծուած տխուր երեւոյթները եթէ սրբագրուին, վստահաբար կը նպաստեն անտառի (ազգի) առողջութեան: Թերութիւնները մատնացոյց ընելն ալ մաս պէտք է կազմէ անտառի առողջութեան նպաստելու մեր ջանքերուն:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք անտառի (ազգի) վիճակով պէտք է հեռու մնանք խաբուսիկ երեւոյթներէ եւ ձեւականութիւններէ ու անկեղծութեամբ քննարկենք հարցերը: Պրն. Գասպարեան կը մեղադրէ ՍԴՀԿի Քալիֆորնիոյ կազմակերպութիւնը որ չի մասնակցիր ոգեկոչման միասնական ձեռնարկներու: Ի՞նչ միասնական ձեռնարկներու մասին է խօսքը, երբ արտօնութիւններ կ'առնուին եւ պաշտօնական հիւրեր կը հրաւիրուին ոչ թէ «Միացեալ Մարմնի» անունով, այլ՝ անհատ կազմակերպութեանց անունով ու ապա «միացեալ»ի անդամները կը հրաւիրուին իրենց հաւանութիւնը տալու կատարուած իրողութեան:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք անտառի վիճակով, պէտք չէ բաւարարուինք ամէն տարուայ Ապրիլ 24ի նախօրեակին միայն ձեւականօրէն քով քովի գալէ ու ոգեկոչական հանդիսութիւններ կազմակերպելէ, այլ պէտք է գոյացնենք ներկայացուցչական մնայուն մարմին մը, որ ամբողջ տարուան ընթացքին այդ ուղղութեամբ աշխատանք տանի:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք անտառի վիճակով, ապա մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ, օրերու տարբերութեամբ երկու տարբեր Ապրիլեան ոգեկոչումներ չենք նշեր, մեր պառակտուածութիւնը ցուցադրելով, այլ միասնական մէկ ոգեկոչումով յստակ պատգամ մը յղած կ'ըլլանք բոլորին:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ըլլայինք անտառի վիճակով, Եղեռնի նախօրեակին Օսմանեան Փարլամենթէն ներս մի քանի պատգամաւորական աթոռ շահելու սիրոյն չէինք գործակցիր Ատանայի ջարդը իրագործած Իթթիհատականներու հետ, եւ իսկական միասնական կեցուածքով կրնայինք առաջքը առնել շատ մը չարիքներու:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք անտառի վիճակով, ապա ներկայ Հայաստանի Ազգային Ժողովին ու կառավարութեան մէջ պատգամաւորական ու նախարարական աթոռներ գրաւելու սիրոյն չենք հանդուրժեր խարդախուած ընտրութիւնները, մարդկային իրաւանց բռնաբարումները, ժողովուրդը յուսալքումի տանող խայտառակութիւնները:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ըլլայինք անտառի վիճակով, ապա Եղեռնէն ետք մեր ուժերը կը լարէինք միասնական ջանքերով համազգային մեր վիճակը բարելաւելու եւ ոչ թէ եղբայրական կռիւներով զիրար չէզոքացնելու եւ օտարի ձեռքին գործիք դառնալու:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք անտառի վիճակով, ապա նորանկախ Հայաստանի մէջ պիտի չծաւալէինք «Դրօ»ի գործունէու-

Շար.ը էջ 18

INSURANCE COVERAGE
CAN HELP YOU FINANCIALLY
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ
ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
BEDROS, SIAMANTO
MARONIAN
A.B.A. INSURANCE SERVICES
Authorized Agent CA Insurance Lic. #0494056
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association
1975-2005
30th
ANNIVERSARY
E-mail: BMaronian@AOL.com

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

# ՏԱՐՖՈՒՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

**ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ**

*Ինչ որ տեղի կ'ունենայ ափրիկեան աշխարհամասի պատկանող Սուտանի մէջ, հսկայ տարածութեամբ երկիր մը՝ որուն դրացիներն են Եգիպտոսը, Չատը, Եթովպիան եւ Քենիան, ուղղակի ցեղասպանութիւն կարելի է կոչել: Այսպէս կը բնորոշէր Ամերիկայի նախկին արտաքին գործերու պատասխանատու, Քոլին Փաուըլ, Տարֆուրի մէջ տեղի ունեցող վայրագութիւնները: Սուտանի, կառավարական ուժերը, որոնց միացած են «Ճանճաուիտ» կոչուած միլիսիայի անկարգները, իրենց ոճրային գործունէութեամբ, ուղղակի ցեղասպանութիւն կը գործեն Տարֆուրի շրջանի արաբական բնակիչներուն վրայ: Ցարդ 200,000 մեռեալներ, եւ 2 միլիոնի հասնող, հոս-հոն ցրուած բնակչութիւն մը, անապահով վրաններու մէջ տեղափոխուած, կը գտնուին ահաւոր պայմաններու մէջ, ենթակայ սովի, անօթութեան, հիւանդութեանց, բռնաբարումներու, եւ ջարդի, պէտք ունի սնունդի, ապահովութեան, մանաւանդ պաշտպանութեան: Ձիեր եւ ուղտերու վրայ, զինեալ միլիսիայի անդամներ, սարսափ կը սփռեն Տարֆուրեան շրջանի քաղաքներու եւ գիւղերու վրայ, գրեթէ անտարբեր վերաբերմունքի արժանանալով քաղաքակրթուած աշխարհի կողմէ: «Գրեթէ» կ'ըսենք, քանի որ փորձեր կը կատարուին ուշադրութեան եւ ապահովութեան, ինչպէս նաեւ ձախող զինադադարներու, Սուտանի կառավարութեան եւ Տարֆուրեան ըմբոստներու միջեւ, փորձեր որոնք պարզապէս խաբկանքի հանգամանք ունին, շարունակուող ողբերգութեան վերջ մը տալու իմաստով:*

### Ի՞ՆՉ ՈՅԺԵՐ ԿԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄԻ ՎՐԱՅ

*Յիշուեցան Սուտանի կառավարական ուժերը, որոնք «Ճանճաուիտ» կոչուած, եւ մինչեւ ակռաները զինուած միլիսիայի անկարգ կռուողները: Ասոնք են ողբերգութեան հիմնական դերակատարները: Միւս կողմէն կան Տարֆուրի ըմբոստ ուժերը, շատ աւելի տկար եւ անբաւարար զինուած, եւ այս վերջիններու պաշտպանութեան յանձնուած բնակչութիւնը, որ յարատեւ տեղահանութեան կ'ենթարկուի, ինչպէս նաեւ վերոյիշեալ վայրագութեանց: Այս երկուքին միջեւ խաղաղութիւնը ապահովելու եւ ցեղասպանութիւնը արգիլելու համար Սուտան կը գտնուին Ափրիկեան Միութեան պատկանող 5000 «պաշտպանութեան զօրքեր», մեծ մասամբ Ռուանտայէն, Նիճերիայէն եւ Սենեկալէն հաւաքուած, որոնք սակայն, հասկնալիօրէն, անկարող են պաշտպանելու 2000 գիւղերը, դարձեալ ափրիկեան երկիրներէն հաւաքուած: Այս երկու խումբերու հրամանատարը կը խոստովանի թէ կարելի չէ Ֆրանսայի տարածքին չափ մեծ հողամաս մը պաշտպանել յարձակումներու եւ բռնութեանց դէմ: Ոչ միայն այս վայրագութիւնները, այլ նաեւ ուտելիքի եւ ամէն տեսակի օգնութեան նպատակաւ Տարֆուր ղրկուած միջոցները չեն հասնիր թշուառութեան մատնուած գանգուածներուն, քանի որ Սուտանի կառավարութիւնը արգելքներ դրած է խաղաղ տեղափոխութեանց վրայ:*

*Ափրիկեան ուժերու ներկայութիւնը կ'արդարացուի այն առարկութեամբ որ ափրիկեան հարցերը պէտք է լուծուին Ափրիկէի Միութեան կողմէ: «Թող ափրիկեցիները կատարեն ոստիկանի դերը, առանց արտաքին միջամտութեան»: Սակայն, ինչպէս նկարագրուեցաւ, ոչ միայն թուական իմաստով, այլ մանաւանդ ափրիկեան ուժերու համար ճշդուած առաքելութիւնը յստակօրէն չէ սահմանուած, ուրեմն, անոնք կը գտնուին անկարողութեան առջեւ, տեղի ունեցող երեւոյթներու կանխարգիլման եւ զսպումին համար: Ուրեմն այս ուժերուն վիճակուած է զինադադար մը յառաջացնելու եւ խաղաղութեան համար համաձայնութիւն մը գոյացնելու Սուտանի կառավարութեան, «Ճանճաուիտի» միլիսիայի եւ Տարֆուրեան ըմբոստներու միջեւ: Հարցը հոն է որ ահաւասիկ երեք տարիներէ ի վեր, նման միջամտութիւններ ապարդիւն անցած են, եւ Տարֆուրեան ողբերգութիւնը կը շարունակուի նոյն ուժգնութեամբ:*

### Ի՞ՆՉ Կ'ԸՆԷ ՄԱԿԸ

*Շարունակուող այս տագնապին առջեւ, միջազգային հանրային կարծիքը երթալով անհանգստութեան նշաններ ցոյց կու տայ: Նոյնիսկ ուսանողական ցոյցեր կը կազմակերպուին «Տարֆուրի ցեղասպանութիւնը» արգիլելու պահանջքով:*

*Ամերիկայի Միացեալ Նահանգները, Պուշի իշխանութեան տակ, մանաւանդ Իրաքեան եւ Աֆղանիստանեան պատերազմներու պատճառաւ ծանրաբեռնուած, անկարող է, չըսելու համար անտրամադիր, իր ուժերը ղրկելու Սուտան եւ Տարֆուր, գէթ կռիւները արգիլելու եւ խաղաղութեան փնտռտուք մը կատարելու:*

*«ՆԱԹՕ» եւս, Եւրոպական իր հարցերով զբաղած, մանաւանդ Քոսովոյի փորձառութենէն ետք, նոյնպէս անտրամադիր կը թուի Ափրիկէի գործերուն եւ տաղտուկներուն մէջ մխրճուելու:*

*Կը մնայ ՄԱԿը եւ անոր ընդհանուր քարտուղար Քոֆի Աննանի կոչը, մանաւանդ Պուշին, հաւաքներու շուրջ 20,000ի հասնող խաղաղութիւնը ապահովելու ուժի մը ստեղծման համար, որպէսզի լուծում մը գտնուի շարունակուող ողբերգութեան:*

*Ափրիկեան եօթը հազարը անկարող եղած են մինչեւ հիմա, քանի որ չունին հարկ եղած զինուորական միջոցները: Տակաւին հարց է թէ Սուտանի կառավարութիւնը պիտի ընդունի նման խաղաղապահ ուժերու հաստատումը իր սահմաններէն ներս: Ամերիկան եւս, որքա՞ն պատրաստ պիտի ըլլայ իր սեփական ուժերը Սուտան ղրկելու, մանաւանդ իր այլ յանձնառութեանց եւ գաղթականական դժուարութեանց պատճառաւ:*

*Եզրակացութիւնը այն է որ շատ աւելի լուրջ ճիգեր անհրաժեշտ են, քաղաքական լուծում մը յառաջացնելու տագնապի մասնակից ուժերու միջեւ, այսինքն Սուտանի կառավարութեան, «Ճանճաուիտի» եւ Տարֆուրեան ըմբոստներու միջեւ: Եթէ այս լուծումը անկարելի ըլլայ մօտ ատենէն գտնելու, բոլոր կողմերը կը մնան իրենց ներկայ դիրքերուն վրայ: Ցեղասպանութիւնը կը շարունակուի:*


**AGBU PASADENA HIGH SCHOOL**

*Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School*

**REGISTRATIONS FOR 2006-2007 IN PROGRESS**

- High School Prep grade (8th grade equivalent)
- Ninth grade
- Tenth grade
- Eleventh grade
  First graduating senior class in June, 2008

***AGBU High School in Pasadena will provide…***

- A challenging college preparatory program in a safe, caring and supportive environment
- Honors and Advanced Placement classes for accelerated students
- Qualified and experienced faculty dedicated to student learning
- Instruction in Armenian language, history and culture
- Small class sizes and low teacher to student ratio
- Professional guidance and counseling
- Affordable tuition fees

**Call (818) 883-5379, (626) 794-0363, or (818) 883-2428 for immediate assistance**

**2495 E. Mountain Avenue, Pasadena, CA 91107**

**(Corner of Altadena and Mountain)**

www.agbuphs.org

# ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԵՐ ԼՈՒԻԶԻԱՆՅԻ ՆՈՐԱԿԱԶՄ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

*Վերջին տասնամեակներուն Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ Միջին Արեւելքի զանազան երկիրներէն ժամանած հայերու ստուար թիւը պատճառ եղաւ նոր գաղութներու հաստատման: Այդպիսիներէն է Լուիզիանա նահանգը, ուր գրեթէ հայութիւն չկար ասկէ 40 տարիներ առաջ:*

*Լուիզիանան ներկայիս ունի շատ փոքրաթիւ գաղութ մը, ըն-*



*Գերշ. Տ. Խաժակ Արք. եւ մետալակիր Վազգէն Գալթագճեանը իր տիկնոջ եւ դստեր հետ*

*դամէնը 35 հայ ընտանիքներ, որոնք տարածուած են Պաթոն Ռուժի, Լա Փլասի, Նորքոյի եւ Նիու Օրլինզի մէջ: Թէեւ թիւով փոքր բայց հայկականութեամբ տոկուն եւ իրենց աւանդութիւններուն ամրօրէն կառչած մեր ազգակիցները կրցած են միասնականանալ եւ տարին քանի մը անգամ համախմբուիլ մէկ երդիքի տակ: Տարիներ առաջ կազմուած է Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ ծխական խորհուրդը, Ս.Դ.*



*Պօղոս Մութաֆեանի կըյանձնուի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի Հայրապետական կոնդակը*

*Հնչակեան Կուսակցութեան մասնաճիւղն ու Համնոյ Հայրենակցական Միութեան Օժանդակ Մարմինը:*

*Վերոյիշեալ երեք կառոյցները ալ ունին իրենց օգտաշատ գործունէութիւնները, կազմակերպելով հանդիսաւոր պատարագ, Համնոյ Հերոսամարտի Տարեդարձ եւ այլ միջոցառումներ:*

## ԱՌԱՋՆՈՐԴ ԽԱԺԱԿ ՍՐԲԱԶԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Լուիզիանա Նահանգի հայութեան համար պատմական օրեր եղան Մայիսի 13 եւ 14 օրերը: Արդարեւ Մայիսի 13ին, 2006, Շաբաթ օր Արեւելեան Միացեալ Նահանգներու Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան ժամանեց Նիու Օրլինզ: Այստեղ ան շրջանի հովիւ Տ. Ներսէս Աւ. Քհնյ. Ճէպէճեանի եւ Պաթոն Ռուժի Ծխական Խորհուրդի ատենապետ Վազգէն Գալթագճեանի առաջնորդութեամբ շրջեցաւ քաղաքի զանազան մասերը, յատկապէս «Քաթրինա» մրրիկէն աւերուած աղիտալի շրջանները: Նշենք նաեւ որ իր ատենին Խաժակ Սրբազանի նախաձեռնութեամբ յատուկ նուիրահաւաք կազմակերպուեցաւ «Քաթրինա»ի աղէտէն տուժած հայ եւ տեղացի բնակիչներուն:*

*Կէսօրին՝ Խաժակ Սրբազան եւ իր շքախումբի անդամները հիւրընկալուեցան Գրիգոր Տաքէսեանի կողմէ, Գրէյսէնթ Սիթի Պրու Հաուզ ճաշարանին մէջ: Այստեղ «Մայրերու Օր»ուան առթիւ յատուկ յիշատակութեան արժանացաւ եւ գնահատուեցաւ Լուիզիանայի տիպար հայուհիներէն՝ Տիկին Ալիս Ոսկերիչեան:*

## ՕԾՈՒՄ ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՒՈՅ

*Նախքան Ս. Կարապետ եկեղեցւոյ պաշտօնական օծման արարողութեան՝ Շաբաթ, Մայիսի 13ին, երեկոյեան տեղի ունեցաւ դռնբացէքի արարողութիւն եւ նոր եկեղեցւոյ մկրտութեան աւազանի օծում:*

*Կիրակի, Մայիսի 14ին, 2006, տեղի ունեցաւ Պաթոն Ռուժի Ս.*



*Տեսարան մը Դռնբացէքի արարողութենէն*

*Կարապետ Հայաստանեայց Առաք. եկեղեցւոյ օծման արարողութիւնը: Օրուան պատարագիչն էր Արեւելեան Թեմի բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան: Պատարագի ընթացքին տեղի ունեցաւ Ս. Կարապետ եկեղեցւոյ հանդիսաւոր օծումը: Հոգեպարար արարողութեանց իրենց մասնակցութիւնը բերին Հոգշ. Տ. Արարատ Ծ. Վրդ. Գալթաքճեան (Քանատայէն), Հոգշ. Տ. Արսէն Վրդ. Ճէպէճեան եւ եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Ներսէս Աւ. Քհնյ. Ճէպէճեան: Դպրաց դասը կը ղեկավարէր Խորէն Մէխանաճեան:*

*Այնուհետեւ առաջնորդ սրբազան հայրը հոգեշունչ քարոզ մը խօսելով դրուատեց Լուիզիանայի փոքրաթիւ հայ համայնքի եւ յատկապէս Ս. Կարապետ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անխոնջ աշխատանքները, որոնց շնորհիւ այսօր իրականութիւն դարձած է այս աստուածահաճոյ հաստատութիւնը:*

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

*Ս. Կարապետ եկեղեցւոյ օծման արարողութենէն ետք տեղի ունեցաւ պաշտօնական սիրոյ սեղան ճաշկերոյթ Պաթոն Ռուժի «Էմպըսի Սուիթս» պանդոկին մէջ:*

*Ներկաներուն մէջ կը նշմարուէին Խաժակ Արք. Պարսամեան, շրջանի Ս.Դ.Հ.Կ. «Ժիրայր Մուրատ» Մասնաճիւղի ատենապետ՝ Պօղոս Մութաֆեան, Ծխական Խորհուրդի ատենապետ Վազգէն Գալթաքճեան եւ այլ եկեղեցական ու տեղական անձնաւորութիւններ:*

*Սեղանի օրհնութենէն ետք գործադրուեցաւ պաշտօնական յայտագիր մը հանդիսավարութեամբ շրջանի հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ներսէս Աւ. Քհնյ. Ճէպէճեանին: Ան սրտանց ողջունեց ներկաները, որոնք եկած էին նոր եկեղեցւոյ օծման առթիւ իրենց ուրախութիւնը յայտնելու եւ միմեանց շնորհաւորելու այս տօնական իրադարձութեան համար:*

*Ողջոյնի խօսքերով հանդէս եկան նաեւ Ծխական Խորհուրդի ատենապետ Վազգէն Գալթաքճեան Հոգշ. Տ. Արարատ Ծ. Վրդ. Գալթաքճեան, Հոգշ. Արէն Աբեղայ Ճէպէճեան եւ Պօղոս Մութաֆեան: Ասմունքով ելոյթ ունեցաւ Ազատուհի Մութաֆեան:*

*Խօսք առաւ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան եւ առանձնապէս դրուատեց Պօղոս Մութաֆեանի ազգօգուտ եւ եկեղեցանուէր ծառայութիւնները: Արդարեւ, ինքն էր որ 18 տարիներէ ի վեր նախաձեռնած էր գաղութը եկեղեցիով մը օժտելու ծրագիրը: Առ այդ՝ հանդիսաւոր արարողութեամբ, Սրբազանը Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի գնահատանքի եւ օրհնութեան կոնդակը յանձնուեցաւ Պօղոս Մութաֆեանին:*

*Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան յայտնեց թէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ը Հայրապետական կոնդակով Ս. Գրիգոր Լուսաւորիչ մետալով կը պարգեւատրէ Ս. Կարապետ եկեղեցւոյ Ծխական Խորհորդի ժրաջան ատենապետ Վազգէն Գալթաքճեանը, երկու տասնեակ տարիներու իր ազգանուէր, եկեղեցանուէր եւ հասարակական բեղուն գործունէութեան ու նուիրատուութիւններուն համար: Մետալը անձամբ յանձնեց Գերշ. Տ. Խաժակ Սրբազան:*

Շուրջ 500 էջեր եւ 8,500 բժշկական, գիտական, առողջապահական բառեր եւ բացատրութիւններ պարունակող այս գործածական եւ խիստ օգտակար բառարանը, ամէն հայ ընտանիք պարտի ունենալ:

Գին՝ $20.00

Կը վաճառուի գրատուններ Պերճ (818) 244-3830, Աբրիլ (818) 243-4112, Սարդարապատ (818) 500-0790 եւ «Երեւան» տպարան (818) 246-2070

Կարելի է դիմել նաեւ հեղինակին, հեռախօսելով՝ (818) 543-7584

# ՎԱՐՊԵՏ ՌԱՖԻ ՇՐՋԱՊԱՏԸ

»Ես եմ համայնը, եւ ամէնքինն է պարփակուած իմ մէջ«:

*ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ*

*ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ*

Ամերիկահայերի մայրաքաղաք՝ Կլէնտէլաւանի, յորդ անձրեւից ու կիզիչ արեւից կծղած այս բնակավայրի գրեթէ բոլոր եղանակների երեկոները դաժանօրէն հրապուրիչ են, կանչող, Հայաստանի Շիրակ աշխարհի սարտ օդի պէս տրամադրութիւն առաջացնող, մաքուր, անվտանգ, զբօսանքի հրաւիրող: Առաջ եթէ կարօտախտը փարատում էիր հայի հանդիպելու փափաքով եւ ուրախանում, հիմա չհասած նրան, թեքում ես ճանապարհդ, փլկում՝ ինքդ էլ չհասկանալով քո կարօտախտի առեղծուածը: Այնուամենայնիւ, փողոցներում, ծանօթ մայթերին հայերը շատ են զբօսնում, քան միւսները: Ամէնօրեայ լուրերի փոխանակման, ընկերական միջավայրի պահպանման համար մենք էլ ենք հանդիպում միմեանց՝ Պըրէնտ եւ Պրոտուէյ փողոցների խաչմերուկում կառուցուած, երկհարկանի սրճարան-գրախանութում: Անշպար, անջնարակուած ու պարզեբես հայերը շատ են այդ սրճարանում: Կան ուսանողներ, գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, մարզիկներ, գործարարներ եւ անգործներ: Գերակշռում են թոշակառուները, որոնց հետ միշտ էլ հեշտ է լեզու գտնել այս կամ այն գրոյցի վերաբերեալ: Օրակարգը միշտ փոփոխական է՝ քաղաքականութիւն, միջազգային յարաբերութիւնների քննարկում, գրական բանավէճ, սիրոյ վերյուշ... Այս բազմաբնոյթ բնաւորութիւնների մէջ առանձնանաում վարպետ Ռաֆը/ՀՀ վաստակաւոր մարզիչ՝ Ռաֆայէլ Քոչարեանը), մէկն այն հետաքրքիր, ընթերցասէր, կատակող հայերից, ովքեր ճակատագրի հեգնանքով են յայտնուել Գալիֆորնիայում, Կլէնտէլում, սրճարա-գրախանութում: Նրա նմանները թերեւս քիչ, բայց կենդանի շփման ջատագովներ են, հումորի շտեմարան, քայլող կենսախնդութիւն: Վաստակաշատ մարզիկն ու անուանի մարզիչը ջանք չի խնայում պատմել իր մասին, իրենց տանջուած ընտանիքի մասին, ընկերների յաջողութիւնների ու անյաջողութիւնների մասին: Ու միշտ էլ կենսախինդ երանգով է աւարտում իր յուշը: Նրանց անհնար է չլսել, չի ձանձրացնում, պահում է պատումի ու իր շրջապատի եռանդագին աւիւնը, կատակը, յարգանքը: Կան նաեւ այլ հայեր, որոնց լսելն իսկ հաւասար է թունդ վիճահարութեան, անցողիկ յուսահատութեան, սրտնեղութեան: Երբեմնի ամէնագէտ ու ամենտգէտ հայերից խիստ տարբերւում է ազատ ոճի յարգարցան ըմբիշը, ում կեանքը լեցուն է արկածներով ու դիպուածներով, մենամարտերով, յաղթանակներով, ինչու չէ, նաեւ որակ չկազմող պարտութեամբ: Վարպետ Ռաֆի շրջապատում յայտնուած նորեկը կարծես պիտի քննութիւն բռնի՝ կատակի ու տրամաբանութեան: Այլապէս չի վաստակի յետագայ զրոյցներին մասնակցելու իրաւունքը: Դառն իրականութիւն է սա, որի յաղթական համանուագը յաճախ լինում է սրճարանի նեղիչ լռութեան գիտակցաբար խզումը, թէկուզ պահակի նկատողութեան գնով: Դարդոտ, խրտնած, ինքնամոլոր հայերիս համար ոչ միայն մխիթարանք են երեկոյեան հանդիպումները սրճարանում, կամ գրադարանի գրական երեկոների ժամանակ, այլեւ փրկութեան, յոյսի առկայծում են անթեղում վաղուայ հասցէով...

- Բարի երեկոյ, վարպետ Ռաֆ:

- Բարեւ, ախպեր ջան, - ջերմ պատասխանում է նա ու միշտ հարցը թանձրացնում, - ի՞նչ նորութիւն հայրենիքից, աշխարհից:

- Տեղ-տեղ երկրաշարժեր, տեղ-տեղ մահափորձեր, ընտրակեղծիքներ, առեւանգումներ, գլխագների պահանջարկ, խառնաշփոթ, - կատակում եմ ես:

- Ըտենց էլ գիտէի, - թախծում է վարպետ Ռաֆը, առաջարկում ներխուժել սրճարան՝ միւսներին հանդիպելու յոյսով:

- Պարը բոլորեց, - ասում եմ ես ու նստում: Չգրուած մի օրէնք կայ մեր միջավայրում: Շուտ եկողը տեղ է պահում բոլորիս համար: Բանաստեղծ Վարդերեսը, լուսանկարիչ-թղթակից Յովհաննէսը, ֆիզիքոս Լիուդվիգը, գալիս են բանաստեղծներ Քրիստինեանը, Գրիշ Դաւթեանը, ուրիշները: Վերջերս անդամագրուեց երկրորդ ֆիզիկոսը՝ Աբրահամը: Վարպետ Ռաֆի շրջապատը կամաց-կամաց դէմք ու դիրք է ստանում, պահը եռում է, խաչաձեւ զրոյցներին վերջ չկայ: Կայծակնային մտքերի փոխանակումը չի հոգնեցնում: Առհասարակ հայերս բարձրախօս ենք, այնպէս ենք վիճում, որ կողքից նայող ոստիկանը կարող է կարծել, թէ մենք արդէն հաշիւներ ենք մաքրում ու հիմա, ուր որ է կրակոց կը լսի... Հարիֆ, շատ ես միամիտ: Հայը կրակում էմիայն կինոյում՝ թշնամու վրայ: Մօտեցիր, նստիր նրա կողքին, կամ դիմացը,հարցեր տուր, պատասխաններ ստացիր, գոհ ու շնորհակալ կը գնաս: Թէ չէ հեռուանց հեռու հետեւում ես, լրտե՞ս պիտի որսաս, թէ՞ մահապարտ: Որպէս աւանդոյթ նոր անեկդոտը պարտադիր է: Ով չունի, վերջում է խօսք հասնում նրան: Տուն շտապող գրեթէ չի լինում որովհետեւ անգամ եօթ հեռուստակայանները եւ նոյնքան տափակ հեռուստաժամերը ոչ ոքու չեն կարող պոկել սրճարան-գրախանութից, վարպետ Ռաֆի առողջ շրջապատից ու զոռով տուն տանել, ինչ է, թէ քառակուսի վանդակում լռուեց քառակուսի արկղի դիմաց ու ծերանաս՝ անհամ հաղորդումների, շոուների մեղքով: Նախկին ոսկերիչ-երգիչների այծամկանուտ ծղրտոցները հրամցւում են ժամանակակից երգի ու երգարուեստի դիմակի տակ: Դէ, եկ վարդապետ ու մի խելագարուի... Ինչեւէ քեֆճի հասան ենք դառել ազգովի, երգում ենք ամէն տեղ ու պարում, պարադպրոցներում, արեւելեան մարտավեստամոլութիւնն էլ միւս կողմից է կեղեքում:Խճճւում ես, գիտես, լաւ է, թէ՞ վատ: Չես կարող ծանրութեթեւ անել, գտնել ազգային բանալին: Մէկ բան մխիթարիչ է, որ փողոցներում շատ երեխաներ չկան: Վերացած է նաեւ բակում խաղալու ապահով երազանքը: Տարեցները շտապում են Մեյփլի, Փալմերի կամ այլ զբօսագիները, ծերապարտէզները: Մտաւորականութեան մի մասը՝ Ռեւօ սրճարան, միւսները՝ այստեղ, Բորհետ բուկս ընդ միւզիկ գրախանութը: վարպետ Ռաֆի շրջապատն այս հաւաքատեղիում է, շաբաթը երեք-չորս երեկոյ, ասուլիսով, կատակով, ինքնաքննադատութեամբ: Միշտ էլ փորձ է արւում ցրել, թեթեւացնել, փարատել իւրաքանչիւրի հոգսն ու առօրեան: Ազատ ոճի ըմբիշի համար ամէն ինչը բացւում ու փակւում է ուժի, յաջողականութեան տեսակէտից, անվրէպ է մնում համոզմունքը: Ժամպրուկը հաւաքող «ընկերներ» էլ ենք ունենում, որոնց հետ մէկ առուով չեն հոսում մեր ջրերը: Նրանք իրենք իրենց են հեռանում՝ դէպի աղանդապաշտ անկիւնները, կեղծ եղեցիները: Լաւ է, որ օդը մաքրւում է նրանցից: Այլապէս անհասկանալի կը լինէր նրանց երկարող ներկայութիւնը վարպետի շրջապատում: Հեռանում են աղքատ Ղազարոսները, մնում են հոգեպէս հարուստ, բանիմաց, յարգալից մարդիկ, ովքեր գնահատում են ուրիշի կարծիքն ու հաւատում բանավէճերի անկեղծութեանը: Այսպէս յաճախ է արթնանում մեր միջավայրի խաղաղութեան աղաւնին, իսկ պատերազմի, կռուազանութեան ագռաւի համար անգամ լուսանցք չկայ, ուր կարողանայ կռկռալ: Ճանաչողական արուեստին տիրպետողը նաեւ լաւ զրուցակից է լինում:

- Ապրիլ ամիսն է, վարպետ Ռաֆ, միջոցառումները շատ են:

- Չգիտեց, որի՞ն մասնակցես, արա, - սրտնեղում է նա, ժամանակն էլ չի հերիքում, որ հասցնես: Ու մնում ես չլուսաւորուած:

- Հայի բախտ ա, - շեշտում է լուսանկարիչը:

- Մենակ հայի բախտ չէ, - ուղղում է ֆիզիկոսը, - ես գիտեմ, թէ ովքե՞ր են մեղաւոր, որ հայերը էս օրի են հասել:

- Արա, վատ տեղ են հասե՞լ: Ըսենք երկրում են ապրում, - միջամտում է նախկին մագիկն ու վրայ բերում, - դժգոհում էք, չգայիք, ո՞վ ձգեց ձեր թելը...:

-Էս հիւանդագին յաջողութեան մէջ մենք բոլորս էլ կալանաւորներ ենք, ինքնակամ աքսորի ենթարկուած, - պատճառաբանում եմ ես, որ թեման սպառուի:

- Չեղաւ, - ծոր է տալիս ըմբիշը, - դուք աքսոր չէք տեսել, էտի ես եմ քաշել, էս մաշկիս վրայ, Ալթայում: Սիբի ա, է, սառնամանիք:

- Լաւ, լաւ, ուրացողների ցուցակը մի երկարացրու, վարպետ Ռաֆ:

- Չէ, Հարեանց ջան, ըտենք չի: Ես մի բան գիտեմ, որ պապս ասում էր, թէ որտեղ հաց, ընտեղ կաց:

- Դա տիեզերքի հետ կապ չունի, - հակաթեմա է առաջարկում Լիուդվիգը, - օրինակ սեւ խոռոչները մե՞գ ինչ, ջուրը եռում է 100 աստիճանում, ըստ Ցելսիուսի, հայը՝ հազար աստիճանում:

- Արա, տղերք, չէք հաւատում, որ ես աշակերտել եմ տանջանքին ու զրկանքին, անվստահութեանն ու կասկածամտութեանը, ստալինեան բարքերին: Աւելի լաւ ա չխօսեմ, ըսենք որ էթա, բլբուլ կը դառնամ: Ինչպիսի հերոս ընկերներ կորան, չմեռան:

- Բանաստեղծը դրա հակառակն է ասել, մի խառնէ:

- Հաշիւը մէկ ա, ախպերս, ես պարտադիր յարգում եմ մեր ազգի մտաւորականութեանը, նրանց հետ նստել-վեր կենալը պատանեկութեանս երազանքներից ա, դուք էսի չէք հասկանում: Դուք Ալթայ չէք տեսել: Գրամով սեւ հաց չէք տեսել: Բայց մեր հարստութիւնն էք: Գիտէ՞ք, թէ ինչքան գրքեր եմ առնում:

- Որ չես կարդում, խի՞ ես առնում, - կսմթում է լուսանկարիչը:

- Որ քեզնից չտարբերուեմ, բա ո՞նց: Գիրքը մարդու ընկերն ա, բարեկամը:

- Խնամին, քենակալը, - կատակում եմ ես:

- Իմ արեւ, ըսենց ա:

- Վարպետ Ռաֆ, Թուրքի հետ մրցել ե՞ս գորգի վրայ:

- Հա, միջին Ասիայից էր, կրեցի, բժժացրի:

- Ապրես, - մէկ հատ մեդալ իմ կողմից, - խայթում է Վարդերեսը:

- Արէք բոլորս հերթով ապրենք, որ բանաստեղծը պարգեւատրի մեզ, - ասում եմ ես, արդէն սառած թէյը խմելով, պատասխանի չսպասելով:

- Տղաներ, այդպէս չէ, ցարականա սահմաններից խօսէք, բան հասկանանք:

- Մեքսիկայի մասի՞ն է ակնարկդ:

- Դու մի շեղէ:

- Պարապ բան է, տղեկս, երկար ես բացատրում:

- Չէ, տղաներ, պարապ բան չէ ասիկա: Չգիտէք ու չէք խոստովանում, չէք լսում իրականութիւնը:

- Ասում է բանաստեղծը եւ գնում թէյ ապսպրելու:

- Մի նեղանայ, արա, աշխարհը չքանդուաւ: Մի օր լաւ, մի օր վատ, կ՛անցի, կէթա, կարեւորը մեր առողջութիւնն ա, որ պտի պաշտպանենք:

- Դու էլ պայմանագի՞ր ես առաջարկում, - հարցնում եմ ես:

- Խի՞, զարմանում է մարզիչը, - պայմանագիրս ո՞րն ա, պտի իրար հասկնանք, հանդուրժենք, յարգած ըլնենք, բա ո՞նց:

- Տաք ու պաղ մի արէք, - արա, - ֆիզիկոսի սաստող ձայնն է, - ես օրինակ չիմացածիս մասին չեմ խօսայ: Կը լսեմ ու կը լսեմ: Մինչեւ պատմողը յոգնի: Հա, ո՞վ կ՛ուզէ, թող իմանայ: Վերջերս հայ պատգամաւորի են ծեծել:

- Որտե՞ղ, - նախայարձակ եմ լինում ես, որ խկութիւնը տարբերեմ օդ կրակելուց, - ո՞վ ասաց, համացա՞նցը:

*Շարբ. էջ 18*

HYE INSURANCE SERVICES
HARUT DER-TAVITIAN
License #0B28270
1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201
Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com
AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

# ՄԱՅՐԵՐԻ ՓԱՌԱՄԱՆԵԱՆ ՏՕՆ

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Մայիս է դարձեալ, տօնական լոյսի հրավառութիւն թող լինի այսօր, թող բամբեր զարկեն այսօր, թող արեգակը իջնի երկիր ու մայրերի սրտերի սիրոյ ողջոյնը տանի տիեզերք՝ Վահագն Յարդագողի ճանապարհի հայոց մայր դիցուհի Անահիտի տաճարին: Թող մի պահ աստղերը կանգնեն ու իրենց լոյսի թրթիռներով ողջունեն այս մոլորակի մայրերին: Այս իրիկուն արեւի քոյրիկ լուսնեակը իր երկնային կաթնաթոյր համբոյրը թող ցօղի մայրերին: Թող միշտ զուարթութիւն հոսի հայոց աշխարհից այստեղ հանգրուանած մայրերի դէմքերից, նրանց սրտերի բոցավառ ծովակների թրթիռների մայրական տիեզերական սէրը թող յորդի իրենց զաւակների հոգիներին: Մայրերի փառաբանման հրաշափառ տօնակատարութիւն թող լինի այսօր, մայրերի տիեզերական խորհուրդի պատարագ է այն: Հայոց տները այսօր թող հրդեհուեն մայրական սիրոյ կրակով: Հայն իր հեթանոս նախնիների աւանդութեամբ աստուածացրել է մայրերին, այն պաշտամունք է եղել նրանց համար: Մայրը աստուածային եղաւ, որ մոլորակի մարդկանց սրտերին սիրոյ, խաղաղութեան, յոյսի լոյսեր ջրվէժէն:*

*Բնութեան հրաշալիք ծիածանափայլ ծաղիկները թող գգուեն լանջերը մայրերի, թող սիրոյ բոցերով վառուող վարդերը իրենց օճախներում ծիածան կապեն, նրանց կարմիրը թող յորդի իրենց հրաբորբ սրտերի ծովակների ալեակներին: Վարդ, ծաղիկների թագուհին, ծաղիկը բնութեան արարչութեան սքանչելիութեան, որի տեսքից հոգիդ լցւում է հիացմունքի խինդով: Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէսը, վարդատօն էր հիմնել եւ մինչեւ այսօր հայերը իւրաքանչիւր Մայիսին, սիրով վառուած երգիչ՝ Սայեաթ Նովու գերեզմանին վարդերով այցի են գնում:*

*Մայիս, գարնան ամիս, արեգակն իր շողերով կեանք է յորդում մեր երկրին, ծաղկում է բնութիւնը, ծաղկում է մարդու հոգին: Մտիր ցորեանի արտեր, նայիր ծաղկած ցորեանի հասկերին, շոյիր նրանց, բնութեան մայրութիւնը պիտի սարսռայ քու սրտում: Մտիր պարտէզներ, ծաղիկների ծիածան ծովակների ալեակներն են ծփում, ժպտում են նրանք երկնի կապոյտին, ժպտայ նրանց, թող սիրտդ խայտայ բնութեան հրաշքով: Նայիր ինչպէս ն արեւի ճառագայթները իջել ծառերին, համբուրելու ծաղիկների ծիածանացած շրթները: Մտիր անտառներ, նայիր ինչպէս են նրանք իրենց կանաչազարդ թեւերը ճախրել երկնի կապոյտը գգուելու: Բնութեան հրաշափառ արարման խորհուրդն է, հողի սրբագործ արարչութիւնն է այս, եւ այն կոչում ենք մայր բնութիւն, մայր հող՝ որպէս մայրութեան սրբագնացում:*

*Մայրերը իրենց ձեռքերը սիւն են դարձրել որ չփլուեն տները հայոց: Եւ ինչքան սիրով է լցուած եղել մի իմաստասէրի սիրտը, որ յանդգնել էր ասելու «Աստուած էլ կը գտնես, սակայն յաւերժութիւն դարձած մօրը երբեք»: Աստուածային բարութեամբ յորդած մայր, որ ըստ մի այլ մտածողի, պատուիրում է իր մահից յետոյ ձեռքերը կտրել ու նրանով ծեծել փոքրերին որ ցաւ չպատճառեն նրանց:*

*Պետութիւններ այս ամսին են մայրերի փառաբանման տօն հիմնադրել, որ մայիսեան խինդով առկայծեն նրանց սրտերը: Արմէնները իրենց ոստանը քաղաքամայր են կոչել, երկիրն իրենց Մայր Հայաստան, լեզուն իրենց մայր լեզու, գետն իրենց Մայր Արաքս, ծառն իրենց «Մայրի»: Երեւի մեր Արմէն նախնիները միայն աստուածացրել էին մայրերի պաշտամունքը, ստեղծելով մայրութեան Անահիտ ոսկեձոյլ աստուածուհին: Եկեղեաց գաւառի Երիզա աւանում նրա պատուին հռչակաւոր տաճար էին հիմնել, տաճար էին կառուցել նաեւ աստուածների քաղաք՝ Աշտիշատում, Աստղիկի ու Վահագնի Վահէ Վահեան մեհեանների կողքին:*

*Մայրերի օրուան նուիրուած ամենավաղ տօնակատարութիւնները կատարուեն էին հին Յունաստանում, պատուելու համար աստուածների մայր Ռէան: 1600 թուականներին Անգլիացիք, մեծ պահքի չորրորդ կիրակին տօնախմբել էին մի օր, որը կոչուել էր «Մօր այցելութեան օր»: Քրիստոնէութիւնը Եւրոպայում տարածուելուց յետոյ, այդ տօնակատարութիւնը վերանուանել էին «Մայր Եկեղեցի» այն որպէս հոգեղէն ուժ կեանք շնորհէր ու նրանց պաշտպանէր վտանգներից: Ժամանակի ընթացքում եկեղեցական այդ տօնը վերափոխել էին որպէս «Մայրական Կիրակի» տօնակատարութիւնների օր:*

*Միացեալ Նահանգներում «Մայրերի Օր»ը առաջին անգամ թելադրուել էր կատարելու 1872 թուականին, Ժուլիա Վարտ Հոուվի կողմից, որպէս խաղաղութեանը ձօնուած օր: 1907 թուականին, Ֆիլատելֆիայում, Աննա Ճարւիսը սկսել էր մի արշաւ՝ հիմնադրելու «Մայրերու Ազգային Օր»: Տիկին Ճարւիսը համոզել էր քաղաքի եկեղեցուն, մայրերի օրը տօնելու Մայիսի երկրորդ Կիրակին, իր մօրը մահուան երկրորդ տարելիցի օրը: Նա իր համախոհների հետ նամակներ էին յղել նախարարներին, քաղաքական գործիչներին՝ մայրերի օրուայ տօնակատարութեան օր հաստատելու համար: եւ 1914 թուականին ԱՄՆի նախագահ, Մեծ Հայքի վեց Վիլայէթներում Հայաստանի պետականութիւնը վերականգնելու երաշխաւոր, Վուտրօ Վիլսընը պաշտօնական յայտարարութեամբ իւրաքանչիւր տարուայ Մայիսի երկրորդ օրը հռչակել էր որպէս մայրերի օրուայ տօնակատարութեան օր: Այժմ աշխարհի շատ երկրներ, ինչպէս Դանիա, Ֆինլանտա, Իտալիա, Թուրքիա, Պելճիքա, Աւտրալիա «Մայրերի Օր»ը նոյնպէս տօնում են նշուած օրը:*

*Հայաստան արշաւող Հռովմէացի Անտոնիոս զօրավարը, հայոց աշխարհում մայրութեան օրհնութիւնը խորտակելու նպատակով գերեվարել էր Անահիտ աստուածուհու ոսկեձոյլ արձանը, այն տարել Կլէօպատրայի երկիր եւ անյայտ առեղծուածով նրա անագապղինձեայ կրկնօրինակի գլխամասն է միայն հիմա հանգչում Անգլիական թագաւորական թանգարանում: Հռովմէական Կալիկուլա կայսրը Հռովմում կայսերական խնճոյք էր սարքել, եւ երբ նրան հարցրել էին թէ այդքան դրամ որտեղից, պատասխանել էր, որ այն կատարել էր Արմէնների Անահիտ աստուծոյ ոտքի միայն մի մատի արժէքով:*

*Հապա, բեմադրիչ՝ Աշոտ Մալքայեանի «Մայրիկ» շարժապատկերը, աշխարհի որ բեմադրիչն է իր մայրիկին նման պաշտամունքի արժանացրել եւ տարել նրան աշխարհների բեմերին: Այն հայ ընտանիքի, հայ մայրիկների փառաբանումն է:*

*Մայրերը որպէս հրեշտակներ, անքուն գիշերներ՝ իրենց մանչերի օրօրոցների մօտ օրօրներ են ասում, նրանք լսում են այն եւ մայրական հոգու սիրոյ անդորրն իջնելով իրենց սրտերին՝ անուշ քուն են լինում: Եւ բանաստեղծներ հայոց երգել են մայրութեան սիրոյ խորհուրդը: Բանաստեղծ Գամառ Քաթիպան երգել էր մայրերի օրօրը՝*

Քուն եղիր բալաս, աչերդ խուփ արա՝
Նախշուն աչերուդ քուն թող գայ վրայ:
Օրօր իմ բալաս, օրօր ու նանի,
Իմ անուշիկիս քունը կը տանի:
Դուն ալ քուն եղիր, ինծի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր, անուշիս քուն տուր:
Օրօր իմ բալաս, օրօր ու նանի,
Իմ անուշիկիս քունը կը տանի:

*Եւ ուրիշ մի հանճարեղ հայ՝ երգահան Բարսեղ Կանաչեան, Քաթիպայի երգին հնչիւններ հիւսեց, եւ ինչքան անուշ է այն, կարծես երկնից է քաղեր այն: Սակայն մայրեր իրենց մանչերի սրտերին ռազմի երգեր են նաեւ յորդել՝*

Զարթիր, որդեակ վեր կաց,
Պատերազմ մի փող հնչեց,
Զարթիր գոչեց ձայնն հայրենեաց,
Կենաց մահու ժամն հնչեց:

*Եւ ուրիշ մի բանաստեղծ Շիրաց հայոց, Շիրազի վարդերի բոյրով, իր հետ տիեզերքից բերած սիրոյ ղօղանջներով երգեց մայրերի խորհուրդը՝*

Հազար ու մի սիրտ բացեցի,
Ոչ մի անմեռ սէր չգտայ,
Ծովից խորունկ սէր զգացի,
Երբ մայրիկիս սիրտը մտայ:
Մօր սրտում է Աստուած քնած՝
Լոկ մօր սրտի մէջ է զարգնում,
Աւաղ, առանց Աստուծոյ մնաց
Իմ որբ կեանքը՝ անյոյս մթնում:

*Շիրազ, Արարատի ձիւնաշաղ ծաղիկների, նրա ձիւնոտ թագի, նրա քարեղէն սրտի, նրա ոգեղէն խորհուրդի մեհեանի քրմացած բանաստեղծը ինչքան սիրով ու խանդաղատանքով է երգել մօր սիրտը, նրա արմենական հոգուց ժայթքած մայրական տիեզերական սիրոյ խորհուրդի ինչքան բանաստեղծութիւններ է երկներ եւ այն Մեսրոպի լուսեղէն գրերով քանդակել որպէս «Յուշարձան» մայրերին:*

*Եւ այսօր մայրերը ծաղիկների նման լոյս ժպիտներով թող յորդեն, արեւներ նրանց, արեւի նման յաւերժութիւն նրանց եւ եթէ կարողանայիք կարդալ սրտերը նրանց... օհ, մայրական յուշերի ինչքան խարոյկներ են վառւում այնտեղ:*


## ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից



## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Նուիրուած՝
ՁՕ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒՆ

Կազմակերպութեամբ՝
Հ.Մ.Մ.-ի Խնամակալ Մարմնի

Կատարողութեամբ՝
Սիրուած Երգիչ՝ Հրաչ Պողարեանի

8 Յուլիս 2006
երեկոյեան ժամը 8:30-ին
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սօղանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena

Մուտքի նուէր՝ $50.00
Նեռարեալ Ճաշ

# ԵՐԿՆԱԿԱՄԱՐՈՒՄ ՆՈՐ ԱՍՏՂ
## 15 ԱՄԵԱՅ ՍՈՊՐԱՆՕ ՄԵԼԻՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԻ ՄԱՍԻՆ

*ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ*

*Տարիներ առաջ, Լոս Անճելոսի հանրայայտ «Լարք» երաժշտական ընկերակցութեան հրաւէրով Երեւանից ԱՄՆ ժամանեցին մի տասնեակ տաղանդաւոր պատանի երաժիշտներ (դաշնամուր, շուի, սաֆսաֆոն եւ այլն) նրանց համերգի յայտագիրը կազմելիս երկար քննարկում էր – թէ ինչպէ՞ս ներկայացնել, որ ճշգրիտ համապատասխանէ նրանց տաղանդին: Վերջապէս որոշուեց «պատանի վիրտուոզներ»ի համերգը թէպէտ «վիրտուոզը» հայերէն չէ, սակայն համերգից յետոյ միանշանակ համոզուեցինք, որ այն լիովին արտայայտում է նրանց բարձր վարպետութիւնը:*

*Մելինէ Համբարձումեանի պարագայում «վեր բարձրացող աստղ» շնորհը նա վաստակել է աւելի քան տաս տարիների ընթացքում շարունակաբար ցուցադրելով իր արտակարգ ընդունակութիւնները միաժամանակ-ոկալի, դաշնամուրի եւ իր սեփական ստեղծագործութիւններում լիրաւի ապշեցուցիչ է, որ ընդամէնը մի քանի տարեկան փոքրիկ աղջնակը սիրով երգում է, դաշնամուրի վրայ նուագում եւ նաեւ երգեր է յօրինում:*

*Այս «հրաշք մանուկի» մասին աւելի մանրամասն: Մելինէն ծնուել է 1990 թուին, Երեւանում: 9 ամսական հասակում ծնողների հետ տեղափոխւում է ԱՄՆ, Լոս Անճելոս: Առաջ անցնելով նա այժմ սովորում է Ռոզ եւ Ալէք Փիլիպոս դասարանում հիանալի տիրապետում է ու խօսում կիրթ հայերէնով, չնայած ամերիկեան շրջապատին, սա հնարաւոր է քանզի նրա ծնողները յարգարժան Արաքսիան եւ Համլէտը ջանասիրաբար անում են ամէն ինչ, իրենց ընտանիքում պահպանելու հայ լեզուն, մշակոյթը, հաւատքը եւ հայ աւանդոյթները: Տէր եւ Տիկին Համբարձումեանները առաջին նկատեցին Մելինէի երաժշտական ընդունակութիւնները եւ ամէն ինչ անում են նրա դաստիարակութեան ու ապագայի համար: Չնայած նիւթական ծանր պայմաններին:*

*4 տարեկանից Մելինէն յաճախում է երաժշտական դպրոց - դաշնամուրի բաժին: Մելինէն իր առաջին ստեղծագործութիւնը նուիրեց իր սիրասուն մօրը՝ «Մայրիկիս»:*

*Շուտով Մելինէին նկատեց ճանաչուած կոմպոզիտոր Եուրի Ղազարեանը, որ կոմպոզիցիայի դասեր է տալիս նրան, մեծապէս նպաստելով Մելինէի ստեղծագործական կայացմանն ու մշակմանը: Բաւական է նշել, որ Մելինէն ունի 15ից աւելի ստեղծագործութիւններ՝ դուդուկի, ջութակի եւ դաշնամուրի համար, որոնք շարունակաբար կատարւում են համայնքում ճանաչուած երաժիշտների կողմից:*

*Մելինէի ոկալ, ձայնային հիանալի տուեալներին ծանօթացաւ ՀՀ վաստակաւոր արուեստագէտ, հայ օփերային աստղերից սիրուած սոպրանօ Էլլադա Չախոյեանը, որի անզուգական երգը վայելել են Հայաստանում, ՍՍՀՄի գրեթէ բոլոր պետութիւններում եւ արտասահմանում: Նա ճիշդ ժամանակին համաձայնուեց Մելինէի անսովոր ձայնի մշակումը վերցնել իր պրոֆեսիոնալ հսկողութեանը, որը անկասկած Մելինէին կը տանի նորանոր բարձունքներ:*

*Մելինէն իր առաջին մենահամերգը տուեց 11 տարեկան հասակում եւ հանդէս եկաւ որպէս երգչուհի, դաշնակահարուհի եւ կատարեց նաեւ իր ստեղծագործութիւնները:*

*2002 թ. Մելինէն մեծ ոգեւորութեամբ գրեց «Ցուշ Նահատակաց» շատ յուզիչ գործը, նուիրուած 1915 թ. անմեղ զոհերի յիշատակին: Նա, արդէն ունի իր երգերի եւ ստեղծագործութիւնների ձայնասկաւառակը, որոնք կատարւում են նաեւ համայնքի ճանաչուած արուեստագէտների կողմից:*

*Մելինէ Համբարձումեանը արդէն հասցրել է մասնակցել բազմաթիւ մրցոյթների եւ արժանացել է բազմաթիւ պատուագրերի Փալմ Սբրինկում կայացած օպերային ոկալ-սոպրանոների մրցոյթում, իր ձայնային զարմանահրաշ տուեալներով հիացրեց մասնակիցներին, սակայն եզրափակիչ ժիւրին չթոյլատրեց, քանի որ մրցոյթը 18 տարեկանների համար էր, իսկ Մելինէն՝ 14 տարեկան:*

*Էլլադա Չախոյեանը այն պրոֆեսիոնալ մանկավարժներից է, որ յստակ գիտի իր սաներից ում, երբ, որտեղ, ներկայացնի հասարակութեանը: Նա նաեւ հմուտ մանկավարժ է:*

*Եւ ահա 2006 թուականի Ապրիլի 30-ը Հուվր Հայ Սքուլի գողտրիկ դահլիճը:*

*Չնայած այդ օրը մի շարք այլ միջոցառումներին – (Թարայի համերգը) դահլիճում ազատ տեղեր չկային:*

*15 ամեայ Սոպրանօ Մելինէի առաջին մենահամերգը, որպէս երգչուհի...*

*Դժուար է նկարագրել այն բացառիկ պահերը որ ներկաները, ասես շունչերը պահած, համակ լռութեամբ լսում, իսկ իւրաքանչիւր կատարումից յետոյ, պոռթկում էր ծափահարութիւնները եւ անզուսպ հիացական բացականչութիւնները – եւ այսպէս մինչեւ վերը, նախ, անհաւատալի էր Մելինէի համերգի Ա. բաժնի երգացանկը.- Սկառլատի, Հէնդել, Մոցարդ, Ռիմսկի Կորսակով, Վերդի, Դոնիցետտի եւ այլ – յայտնի է, որ ոկալի համար գրուած այս բարդ ու ձայնային այս դժուարին արիաները, շատ քչերն են համարձակւում կատարել: Աննկարագրելի է Մելինէի բեմական վարպետութիւնը, նախ նրա անչափ գեղեցիկ արտաքինը եւ որ ամենաբարձր նոթաներ վերցնելիս, նրա դէմքին նոյն հմայիչ ժպիտներ, ասելս նրա համար դժուար չէր – սովորական էր ներկաներուս այդ օրը տեսանք իսկական Թումանեանական Անուշին եւ ապագայի այն մեծ երգչուհին, որը զարդարելու է աշխարհի լաւագոյն բեմերը:*

*Համերգի բ. բաժինը կազմուած էր բացառապէս հայ կոմպոզիտորների գործերից: Մեծ քնքշութեամբ ու բարձր վարպետութեամբ Մելինէն կատարեց Ռոմանոս - Մելիքեանի, Տէր Ղեւոնդեանի, Կոմիտասի, Դոլափեանի, Կանաչեանի եւ այլ երգեր:*

*Մելինէի կատարումներին ընդմիջում էր նաեւ սկսնակ երգիչ Շահէ Մարկ Շանթ անունով պատանին, որը ընդամէնը մի քանի ամիս է պարապում Էլլադա Չախոյեանի մօտ, եւ անտարակոյս*

*Շար.ը էջ 18*




مطعم الشرق

WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT

"Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT

EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW




NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

CALL FOR RESERVATIONS

TEL 626-281-1006 626-587-1048

FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA




BELLY DANCING

PHOTO/CONCEPT-J/D-2005 TEL (6260 795-4493

# ԹՈՒՐՔԵՐՈՒՆ՝ ԹՈՒՐՔԻԱՆ ԹՐՔԱՑՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ6–էն*

*Աթաթիւրքին ղրկած հեռագրին առ ի պատասխան օրուան ներքին գործոց նախարար Շիւքրիւ Քայա Էտիրնէ կու գայ եւ դէպքերուն ծաւալման արգելք կ՛ըլլայ: Խնդրոյ առարկայ այս անձին կարծիքը այն է, թէ հրեաներով շրջապատուած, մինչեւ իսկ ատամնաբոյժը (Sami Gizburg) հրեայ եղող Աթաթիւրք դէպքերէն տեղեակ չէ եղած, բայց երբ կացութեան իրազեկ կը դառնայ, դէպքերուն յառաջխաղացքը կը կանխէ: Ըստ այս անձին տուած տեղեկութեան, այս հարցերէն առաջ, երբ Էտիրնէի քաղաքապետութիւնը հրեաներուն քոշըր միս կտրելուն արգելք կ՛ըլլայ, հօրը՝ Աթաթիւրքին ղրկած հեռագրէն յետոյ, այս արգելքը կը վերցնուի» (15)*

*Թրակիոյ 15,000 հրեաներէն 13,000-ը, ստեղծուած կացութեան իբր հետեւանք, Կ. Պոլիս գաղթեց: Անոնցմէ ոմանք կրցան իրենց կահկարասին, տուները եւ վաճառատուները չափազանց չնչին գինով ծախել: Ուրիշներ այդ իսկ չկրցան ընել:*

*Հակահրէական դիրքաւորումը հրեայ երիտասարդներու մօտ սիոնիստական շարժումին տարածման պատճառ եղաւ: Մաս մը հրեաներ ալ անգլիական գերիշխանութեան տակ գտնուող Պաղեստին գաղթեցին, ուր, յառաջիկային, Իսրայէլի պետութիւնը հիմնուեցաւ:*

*Կառավարութիւնը մերժեց ստանձնել դէպքերու պատասխանատուութիւնը,ո չ ալ հատուցում վճարեց: (16)*

*ԱՄՆ-ի Կ. Պոլսոյ հիւպատոսարանի պաշտօնեաներէն Ջարլզ Է. Ալլընի (Charles E. Allen) պատրաստած 1 Օգոստոս 1938 թուակիր տեղեկատուութեան մէջ Թրակիոյ դէպքերը հետեւեալ նախադասութեամբ կը ներկայացուին: «Թուրքը իր պատմութեան տեւողութեան, պարտքերուն տուած նեղութենէն ազատելու եւ արժէքաւոր ապրանքներու սեփականատէրը դառնալու համար տեղահանումէն՝ աւելի լաւ ձեւի մը գոյութիւն չունենալը սորված է»: (17)*

*1929ին, Անատոլուի մէջ մնացած հայերու դէմ հալածանք սկսաւ: Տիարպեքիրի ու Խարբերդի (Հարդբուրդ) հայոց հասկցուցին, թէ երկրէն հեռանալ «ի նպաստ իրենց» էր: Սեբաստիոյ (Սիվաս) մէջ հայոց արգիլուեցաւ քաղաքին սահմաններէն դուրս ելլել, եւ կարգ մը արհեստներ իրենց ձեռքէն առնուեցաւ: Ըստ ֆրանսական հիւպատասորանանի 1929ին պատրաստած մէկ տեղեկատուութեան, այդ տարուայ կիսուն, Սեբաստիոյ հայոց հարուստ դասակարգին մեծամասնութիւնը քաղաքէն հեռացած է: 1929-1930 թուականնեերուն, աւելի քան 6,000 ստիպողաբար Սուրիա գաղթեցին: Անոնց՝ սուրիական պատասխանատուներուն տուած տեղեկութեան համաձայն պարտադրուած էին գաղթելու: Գաղթի ճամբուն վրայ յաճախ աւազակներու յարձակումին ենթարկուած ու կողոպտուած էին»: (18)*

*«Իսքեան Քանունը»ին հռչակումէն (21 Յունիս 1934) մօտաւորապէս վեց ամիս առաջ Անատոլուի հայերուն դէմ նոր հալածանք մը եւս սկսաւ: Ջանացին տեղացին գրգռել, որպէսզի «կեաւուր»ը իր բնակավայրէն վտարողը տեղացին ըլլայ: Հայեր իրենց ստացուածքը չափազանց չնչին գիներով ծախեցին: Երկու ամսուայ ընթացքին 600 հայեր պարտադրաբար Կ. Պոլիս գաղթեցին: «Իսքեան Քանուն»ըին հռչակումով այս բռնագաղթը օրինականացուեցաւ: (19) 1915ին ալ նոյնը ըրած էր երիտթուրքերու կառավարութիւնը:*

*13 Յուլիս 1939ին Ալեքսանդրէթը (Իսկենտերուն Iskenderoun) Թուրքիոյ կցուեցաւ եւ վերանուանուեցաւ Հաթայ (Hatay): Ալեքսանտրէթի ֆրանսական գրաւման շրջանին Կիլիկիայէն հոն հաստատուած 35,000 հայերուն պարտադրեցին 18 ամսուայ մէջ երկրէն հեռանալ: Նոյնը պատահեցաւ Մուսալերան հայութեան:*

*Այս բոլորը «ազգ-պետութիւն» կազմելու, փոքրամասնութիւններէն փրկուելու քաղաքականութեան հետեւանքն էին:*

*Երկրորդ Աշխարհամարտը, երկիրը եւ տնտեսական հրապարակը թրքացնելու նպատակով մշակուած ծրագիրը գործադրութեան դնելու առումով, օգնութեան հասաւ երկրին նախագահ իթթիհատական Իսմէթ Ինէօնիւն, ինչպէս Առաջին Աշխարհամարտը օգնութեան հասած էր իթթիհատական եռեակին:*

*Երկրորդ Աշխարհամարտի Պալքանեան Պատերազմի օրերուն Հանրապետական Ժողովրդական Կուսակցութեան Ճումհուրիյէթ Հալք Փարթիսի - (CHP) խմբակին 30 Նոյեմբեր 1940ի նիստին, երեփոխան Քեազըմ Քարապեքիր՝ Հայաստանի վրայ յարձակող քեմալական բանակներուն հրամանատարը, ոչ-մահմետականներու նկատմամբ գոյութիւն ունեցող անվստահութեան մասին կը խօսի, որ կը ցոլացնէ քեմալական վերնախաւին մտածելակերպը. «Իսթանպուլի գրաւումը պէտք է նկատողութեան առնենք եւ ըստ այնմ կարգադրութիւններ կատարենք: Այսպիսի պարագայի մը հայերը, յոյները եւ հրեաները ի՞նչ պիտի ընեն:... Պատերազմական կացութիւն մը նկատի առնելով վնասակար տարրերը պէտք է Անատոլու փոխադրենք: Այս տարրերուն լքած տուները պէտք է թուրքերուն տանք»: (20)*

*Երբ գերմանական բանակը սովետական հողամասերու վրայ յառաջխաղացք արձանագրեց, Թուրք կառավրութիւնը, 1941ի Մայիսի, Կ. Պոլսոյ փոքրամասնութեան՝ հայ, յոյն նաեւ հրեայ, 25-45 տարու՝ 1894-1913 ծնունդ այրերը, առանց կանխաւ լուր տալու, փողոցներու, գործատեղիներու, դպրոցներու մէջ ինքնութեան ստուգում կատարելով, 48 ժամուայ մէջ հաւաքեց: Փոքր Ասիոյ ոչ-մահմետական այրերն ալ հաւաքուեցան: Յառաջիկային այս հաւաքումը կոչուեցաւ «Քսան Դասակարգի Զինուորագրում»: Հաւաքուածներուն մէջ երկու, նոյնիսկ երեք անգամ զինուորագրուած, զինուորական ծառայութենէն հազիւ արձակուած անձեր ալ կային: Անոնց զինուորական համազգեստ եւ զէնք չտրուեցաւ: Փոխան համազգեստի անոնց տրուեցաւ 1939+ի Երզնկայի (Էրզինճան) երկրաշարժէն ետք Յունաստանէն որպէս օգնութիւն ղրկուած աղբահաւաքի հագուստները: Զինուոր նկատուելով հանդերձ, փոխանակ անոնցմով զինամարզութեան ջոկատներ կազմելու, ընհանրապէս հայերով կազմուեցաւ «ամէլէ թապուրլարը» ‘amele taburlari - բանուորական գումարտակներ): Յոյները եւ հրեաները բանակի մէջ երկրորդական գործերու մէջ աշխատցուեցան: Բանուորական գումարտակները երկրին խորերը փապուղի բանալու (Զոնկուլտաք) քար կոտրելու, ճամբայ շինելու (Աֆիոն, Քարապիւք, Գոնիա, Քիւթահիա...) ղրկուեցան: Ցուրտ կլիմայի տակ ենթարկուեցան տաժանալի աշխատանքի: Իրենց հրամանատարները յաճախ «Իսթանպուլը եւ ձեր ընտանիքները անգամ մը եւս պիտի չտեսնէք» ըսին: (21) Տարաձայնութիւններու համաձայն, անոնց բնաջնջման համար պետական որոշում կար: (22) Հաւաքումի նպատակը շատ յստակ էր. աճելու, բազմանալու եւ տնտեսապէս արդիւնաւոր տարիքի մէջ գտնուողները «չէզոքացնել»: Անոնք, որոնք այդ անհանդուրժելի չարչարանքներուն չկրցին տոկալ, մեռան: Գերմանացիներուն Ստալինկրատի առջեւ կրած պարտութիւնը (18 Նոյեմբեր 1942) 20 դասակարգը ստոյգ մահէ ազատեց: Զախողցաւ Իսմէթ Ինէօնիւի՝ փոքրամասնութիւններու այր մարդիկը «չէզոքացնել»ու ծրագիրը: Անոնք 27 Յուլիս 1942ին ազատ արձակուեցան:*

*1942ին ազգայնամոլ ու ցեղապաշտ շարժումը սաստկացաւ: Հակահրէական հոսանքը դարձեալ չափազանց զգալի դարձաւ: Գերմանական գրաւման տակ գտնուող Ռումանիայէն փախած 769 հրեաներ, "Struma" անուն նաւով, 1941ի Դեկտեմբեր 15ին Կ. Պոլիս հասան: Ռուզեցին Թուրքիա ապաստանիլ: Վարչապետ Ռեֆիք Սայտամ, նաւը երկու ամիս սպասցնելէ ետք, 24 Փետրուարի 1942ին մերժեց անոնց խնդրանքը ու նաւուն հրամայուեցաւ Ռումանիա վերադառնալ: Գերմանական ընդծովեաներ նաւ Սեւ Ծովու մէջ ընկղմեցին: Միայն մէկ հոգի ազատեցաւ: Վարչապետը «Թուրքիա ուրիշներու համար անբաղձալի նկատուած անձերուն բնակավայր չի կրնար ըլլալ» ըսաւ: (23) Նոյն վարչապետին հրամանով, 4 Մայիս 1942ին, «Անատոլու Աժանս» (Թրքական լրատուական գործակցութիւն) աշխատող 26 հրեայ գործէն արձակուեցան: (24) Մի քանի ամիս ետք, հակառակ լեզուի ազատութիւնը երաշխաւորող Լօզանի Դաշնագրի 38րդ յօդուածին, որպէս մշակուած ծրագրի գործադրութիւն, երեսփոխան մը Ազգային Ժողովի ամպիոնէն «... մաս մը քաղաքացիներու հասարակած վայրերու մէջ խօսած լեզուն Թրքերէն չէ: Ով քաղաքացի, եթէ Թրքահպատակ ես, Թրքական լեզուի յարգանք ցոյց տուր: Դիմացդ գտնուղ Թուրքին զգացումները մի վիրաւորէր» պոռաց: Ցեղասպաշտներ, ազգայնամոլներ, փանթուրանիստներ փոքրամասնութիւններու թաղերուն մէջ «քաղաքացի Թրքերէն խօսէ» բացագանչութիւններով թաղեցին սարսափի մատնեցին, նոյնիսկ ֆիզիքապէս ալ անհանգստացուցին:*

**(Շարունակելի 2)**

*********

13. «Թիւրքիյէ էքոնոմիսինին Թարիհի 1900–1960» «Թուրքիոյ Տնտեսութեան Պատմութիւնը 1900–1960«, Թեֆիք չաւտար, 2003, էջ 146

14. «Հաթըրլըեորում - Թուրքիյէտէ Կայրըմիւսլիմ Հայաթլարը» (Կը Յիշեմ - Թուրքիոյ Մէջ Ոչ-մահմետական Կեանքեր), Եահեա Քոչօղլու, Իսթանպուլ, 2003, էջ 166:

15. Նոյն, էջ 162, 163, 164

16.. «6-7 Էյլիւլ Օլայլար» (6-7 Սեպտեմբերի Դէպքերը), Տիլէք Կիւլվէն (*) Իսթանպուլ Թարիհ Վաքըֆը, 2005, էջ 100

17. Նոյն, էջ 99

18. Նոյն, էջ 103, 104, 105

19. Նոյն, էջ 105

20. Նոյն, էջ 107

21. Նոյն, էջ 108

22. «Հաթըրլըեորում...», էջ 40

23. Նոյն, էջ 162, նաեւ «Վարլըք Վերկիսի» (Ունեւորութեան Տուրք), Ըրտվան Աքար, Իսթանպուլ, 1992, էջ 84

24. «Վարլըք Վերկիսի», էջ 83

## ՎՐԻՊԱԿ

*Շաբաթաթերթիս, Մայիս 27, 2006 համարի էջ 15ի մէջ, ողբացեալ Տօքթ. Անահիտ Պէրպէրեան-Պագարեանի յիշատակին նուիրուած յօղուածին մէջ Այտա Պագարեան եւ Արտա Պէրպէրեան անունները կարդալ Արտա Պագարեան: Այս առիթով կը դիմենք մեր սիրելի յօղուածագրի՝ Արտա Պագարեանի ներողամտութեան:*

Շրջապտոյտ Դէպի

LAS VEGAS

2 Օր - Յունիս 17-18, 2006

Մեկնում Շաբաթ առաւօտեան ժամը 6:30-ին,
վերադարձ Կիրակի երեկոյեան ժամը 8:00-ին

Մանրամասնութիւններու համար հեռաձայնել՝
(626) 755-4773 կամ (626) 429-8366 թիւերուն:

Http://www.massisweekly.com

# ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ



Ուրախութեամբ կ՛իմանանք որ մեր հաւատաւոր ընկերներէն Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուքճեաններու դուստր Ալիս Թաւուքճեանը յաջողութեամբ անցուցած է Քալիֆորնիոյ Bar Examը եւ պաշտօնի կոչուած որպէս public defender: Ալիսը եղած է Հ.Մ.Մ.ի արենուշ, ինչպէս նաեւ «Կայծ» Երիտ. Միութեան ժրաջան անդամներէն: Ան իր համալսարանական շրջանը աւարտած է UC Irvine-էն ու ապա իրաւաբանական տիտղոս ստացած Loyola համալսարանէն:

Այս առթիւ մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնենք երիտասարդ իրաւաբանուհիին մաղթելով նորանոր յաջողութիւններ:

# ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ուրախութեամբ իմացանք որ Հարաւային Գալիֆորնիոյ Domingez Hills համալսարանի սանուհիներէն եւ «Մասիս» շաբաթաթերթի հարազատներէն, Տիկ. Վարդուհի Գազանճեան, յաջողապէս տիրացած է Մագիստրոս վկայականին, Ուսումնական եւ Խորհրդատուութեան մասնագիտութեան մէջ, Հինգշաբթի, Մայիս 18, 2006ին:

Այս ուրախ առիթով, «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ անձնակազմը ջերմօրէն կը շնորհաւորեն զինք եւ իր ընտանեկան բոլոր պարագաները, մասնաւորաբար իր կողակիցը՝ Թերթիս պատասխանատու խմբագիր՝ Ընկ. Տօքթ. Արշակ Գազանճեանը, մաղթելով նորանոր յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

# ԴՈՒ ԻՄ ՉՔՆԱՂ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

## Մ.ԻՆ

## ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲՈՅԱՄԵԱՆ

Յետադարձ հայեացքս երբ տանում է ինձ  
Դէպի անցեալը հեռաւոր,  
Վերյիշում եմ ես միշտ սիրով  
Անմեղ ծիծաղդ մեզ գերող:

Դու իմ չքնաղ աստուածածին  
Դու իմ փայլող արեգակ,  
Դէմքդ նուրբ է տիրամօր պէս  
Մաքուր, ուղիղ եւ շիտակ:

Մի անսովոր ջերմութեամբ լի պարուրուած է քո հոգին,  
Ժպտում ես միշտ մարդկանց դէմքին  
Խօսում հանգիստ, յարգալից:

Կարծես Աստուած շռայլել է  
Շնորհները իր առատ,  
Չի խնայել նա քեզ համար  
Գեղեցիկը բնութեան:

Այսօր ինքդ մայր ես դարձել  
Զգացմունքներով քո բարի,  
Նուիրուած ես եւ հոգատար  
Չափից-չափից աւելի:

Ես որպէս մայր աղօթում եմ  
Ոտքդ չդպչի քարի,  
Եւ ողջ կեանքդ ապրես այնպէս  
Ինչպէս ինքդ կ'ուզէիր:

Իսկ իմ աշնան այս օրերին  
Գլխիս մաղուած արծաթով,  
Ցանկանում եմ միշտ քեզ տեսնել  
Ուրախ, հանգիստ եւ առողջ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԱՆՏԱ՛ՌԸ, ՊՐՆ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Շարունակուած էջ 5-էն

թեան, պիտի չգործադրէինք եղբայրասպան ահաբեկումներ եւ պիտի չունենայինք ահաւոր Հոկտեմբեր 27:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ըլլայինք անտառի վիճակով, ապա քաղաքական եւ տնտեսական շահերու համար պիտի չպառակտէինք Հայաստանեայց եկեղեցին եւ զանազան շրջաններու մէջ, ներառեալ Գալիֆորնիա, զոյգ-զոյգ առաջնորդներով խայտառակ վիճակ պիտի չի ստեղծէինք:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք անտառի վիճակով, ապա տարուան ընթացքին երկու տարբեր առիթներով (Մայիս եւ Սեպտեմբեր) Հայաստանի անկախութիւնը չենք նշեր, շուարումի մատնելով օտարը:

Եթէ մենք իսկապէս մտահոգ ենք անտառի վիճակով, ապա Հայաստան Համահայկական Հիմնադրամը կը վերածէինք աշխարհասփիւռ մեր ուժերը համատեղելու լաւագոյն կառոյցի մը եւ ոչ թէ զայն պոյքոթելով եւ կամ օգտագործելով անոր ազդեցութիւնը կը տկարացնէինք:

Պրն. Գասպարեան, եթէ մեր մօտ «բացակայ ըլլար դէպքերն ու երեւոյթները իրենց պատմական պարունակին մէջ տեսնելու եւ վերլուծելու կարողութիւնը», մենք այս տողերը գրելու ստիպողութիւնը պիտի չի զգայինք: Վերեւի երեւոյթներու առթած ցաւն է, որ մեզ կը ստիպէ բանալու մեր սիրտը: Թէ դուք ինչպէ՞ս կ՛ընկալէք մեր ցաւատանջ արտայայտութիւնները, այդ մէկը ձեր գիտնալիքն է ու ձեր մենաշնորհը:

# ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԹԷՅԱՍԵՂԱՆ

Շարունակուած էջ 8-էն

մայրերը բնութիւնից բարձր էկաներ են, հրեշտակներ են:», եւ շարունակելով իր խօսքը հետեւեալ խորհրդածութիւնը արտայայտեց.- «Կանայք երբ կը մայրանան, այդ վայրկեանէն իսկ աւելիով կը հասկնան մայր ըլլալու իւրայատուկ եւ հրաշալի իմաստը եւ կ՛անդրադառնան որ կը սկսին նմանիլ իրենց մայրերուն, կրկնելով իրենց մօրմէն տեսածներն ու լրածները եւ այդ ձեւով ալ կը սատարեն իրենց մայրերուն անմահացման գործընթացին»: Ապա, եկեղեցւոյս հովիւ՝ Արժ. Տ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեանի օրհնութենէն ետք ներկաները ճաշակեցին ծնողա-ուսուցչական մարմնին կողմէ հրամցուած նախաճաշը: Հաճելի տեսարան մը կը պարզէր սրահը, ուր իւրաքանչիւր հիւրընկալ սեղանապետուհին իր ճաշակով յարդարած էր իր սեղանը, սրահի«ն տալով գունագեղ գեղանկարի մը տպաւորութիւնը:

Այս ձեռնարկին հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին դպրոցիս նորակազմ հայկական պարախումբը եւ ներկաներուն հրամցուցին երկու պար ու ճոխացուցին սոյն ձեռնարկը, անսահման ուրախութիւն պատճառելով ներկայ եղող մայրերուն, որոնք հիացմունքով դիտեցին իրենց զաւակներուն իւրացուցած նուրբ եւ ճկուն շարժումները, որ կարելի է ըսել Մայրերուն Օրուան առթիւ իրենց նուիրուած նուէրներուն մէջէն լաւագոյն նուէրը եղաւ: Հոս տեղին է նշել, որ հայկական վարժարանին նպատակը հայեցի դաստիարակութիւն ջամբելն է անշուշտ եւ այդ ծիրէն ներս հայ մշակոյթը մեր յառաջիկայ սերունդին մօտ վառ պահելու անհրաժեշտութեան գիտակցութիւնը զգալով էր, որ տնօրէնութիւնս այս տարեշրջանին նախաձեռնեց արտադասարանային հայկական պարախումբի մը կազմութեան աշխատանքին եւ պարուսոյց Պրն. Լեւոն Գսոյեանին վստահեցաւ այդ աշխատանքը, որ շատ կարճ ժամանակի ընթացքին կրցաւ աշակերտներուն սիրցնել տալ հայկական պարեղանակներն ու պարերը: Ապա, ներկաներուն համար հաճելի էր դիտել ու ունկնդրել մենախօս Լոռի Թաթուլեանը, որ ներկաներուն ներկայացուց Հայ Տիպար Տանտիկինը, ուր սրամտօրէն եւ թեթեւ հոգիով ներկայացուց կարգ մը կիներուն ունեցած մի քանի յոռի սովորութիւնները:

Վարձքը կատար բոլոր անոնց որոնք նպաստեցին սոյն ձեռնարկին յաջողութեան: Յուսով ենք, որ սոյն ձեռնարկը հաճելի սովորութեան մը կը վերածուի Ծնողա-ուսուցչական կազմի աշխատանքներուն ծիրէն ներս:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ  
ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

# ԵՐԿՆԱԿԱՄԱՐՈՒՄ ՆՈՐ ԱՍՏՂ

Շարունակուած էջ 16-էն

որոշ ժամանակ յետոյ Վահէն, իր ձայնային տուեալներով կը ներկայացուի բոլորվին նոր որակով:

Համերգի կայացմանը մեծապէս նպաստեց տաղանդաւոր դաշնակարուհի Գայանէ Աւագեանը, որը իր պրոֆեսիոնալ նուագակցութեամբ անթերի եւ ներդաշնակ տարաւ ողջ համերգը:

Ես այն երջանիկներից եմ, որ Մելինէին ճանաչում եմ շուրջ 10 տարի Հայկական Ֆուտբոլի լեգենդ Սարգիս Հալիւեանի հետ հանդիպմանը եւ հրաւիրուած էր, որպէս բ. համաշխարհային պատերազմի վեթերան ընդմիջմանը, փոքրիկ երգչուհին - Մելինէն, իր հօրը Համլետին խնդրեց «այ են պապիի հետ ուզում են նկարուել», - ես հպարտ եմ, որ ճանաչում են այս հրաշք աղջնակին, յոյսով եմ, քիչ ժամանակ անց, նրանով հպարտանալու են աշխարհի երաժշտասէրները եւ հայ ժողովուրդը:

Կանաչ ճանապարհ սիրելի էլլադա Զախոյեանին իր բոլոր հայանպաստ նախաձեռնումներում: Թող կատարուեն նրա իղձերը:

Ազգային բարերարներին շատ եկամուտ եւ շռայլօրէն հովանաւորեն ազգային արժէքները:

Երկար, առողջ եւ անտրտունջ կեանք Մելինէի յարգարժան ծնողներին՝ Տիկին Արաքսիային եւ Պրն. Համլէտին, թող նրանց ջանքերը Մելինէի նկատմամբ նրանց սէրն ու գուրգուրանքը օգնեն ու լիցքաւորեն նրան, մեր սպասումները գերազանցելու նպատակին:

Թող Մելինէի դժուարին, քարքարուտ ճանապարհը լցուի բնութեան բազում գոյների անուշահոտ ծաղիկներով, իսկ ամենափրկիչ հրեշտակները մշտապէս թեւածեն նրա գլխավերեւում, նրան օգնելու բոլոր դժուարութիւնները յաղթահարելու, եւ նրա անգուգական, անուշ ձայնը աշխարհով մէկ տարածելու առաքելութեամբ:

# ՀԱՆԳԻՍՏ ՏԻՐԱՄԱՅՐ ՍՐԲՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻՆ



(1911-2006)

Խոր ցաւով կը գուժենք մահը 95-ամեայ Տիրամայր Սրբուհի Արզումանեանի, որ պատահեցաւ 17 Մայիս 2006ին, յետ կարճատեւ հիւանդութեան, Ջէրի Հիլ, Նիւ Ճըրզիի մէջ:

Ողբացեալը եղաւ տիպար մայրը իր վեց զաւակներուն՝ Մաքրուհի (Արթինեան), Յակոբ, Դանիէլ (Տէր Զաւէն), Տոքթ. Յարութիւն, Էլիզապէթ (Մազմանեան) եւ Մարօ (Փաթթուկեան): Իր կեանքը եղաւ ամբողջական նուիրում մը իր ամուսնին՝ Եղիայի (մահացած 1981ին Ֆիլատելֆիայի մէջ), իր զաւակներուն, իր ազգականներուն ու բարեկամներու լայն շրջանակին եւ իր եկեղեցիին ու համայնքին, Գահիրէէն մինչեւ Ֆիլատելֆիա եւ Ֆլորիտա: Իր երկար կեանքի ընթացքին ու մինչեւ իր մահէն չորս ամիսներ առաջ, ան իր հոգածութեան եւ գուրգուրանքին առարկան դարձուց նաեւ իր 17 թոռներն ու 25 թոռան զաւակները, որոնք եղան Աստուծոյ օրհնութիւնը եւ երջանկութեան աղբիւրը իր անձնուէր կեանքին: Շնորհիւ իր բարեհամբոյր բնաւորութեան, ծառայասիրութեան, չարքաշութեան ու ձեռներէցութեան, ան հասաւ բոլորին, անանձնական նուիրումով տուաւ իր կարելին, առանց որեւէ ակնկալութեան եւ սիրուեցաւ ու յարգուեցաւ բոլոր անոնց կողմէ, որոնք ճանչցան զինք եւ որոնց կեանքը քիչ մը աւելի ազնուացաւ իր մաքուր սիրտով եւ հոգիով:

Տան կարգի եւ յուղարկաւորութեան արարողութիւնները կատարուեցան Ուրբաթ, 19 Մայիսին, Ֆիլատելֆիայի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Տ. Եղիշէ Արք. Կիզիրեանի եւ մասնակցութեամբ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեանի, Դոկտ. Զ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեանի (Փասատինայէն), Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Հալաճեանի (Նիւ Ճըրզիէն), Տ. Բարի Քհնյ. Մէթճեանի, եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Թադէոս Քհնյ. Ապտալեանի եւ Հայ Կաթողիկէ համայնքի հոգեւոր հովիւին: Կարդացուեցաւ ցաւակցական գրութիւն մը ուղարկուած Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Տ. Խաժակ Արք. Պարսամեանի կողմէ, ուր կ՚ըսուէր, «Հանգուցեալ Տիրամայր Արզումանեան եղած է տիպար ամուսին եւ մայր: Տան մէջ հայեցի ընտանեկան դաստիարակութիւն ջամբած է իր բոլոր զաւակներուն, որոնցմէ երկուքը մեզի ծանօթ են՝ Տ. Զաւէն Ա. Քհնյ. եւ Տոքթ. Յարութիւն Արզումանեանները, եւ բոլորին մէջ հիմը դրած է Աստուծոյ հանդէպ վախին եւ իրենց ժողովուրդին ու հայրենիքին նկատմամբ»: Արեւմտեան Թեմի Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի կողմէ ստացուած նամակին մէջ կը նշուէր, «Հանգուցեալը եղած է գթառատ եւ բարեսէր հաւատացեալ մը միշտ պատրաստ ուրիշներուն օգնելու եւ մխիթարելու: Իր առաքինի վարքով սիրած է իր հարազատները, բարեկամներն ու դրացիները, փոխադարձաբար վայելելով նաեւ անոնց սէրն ու յարգանքը»: Գանատահայոց Առաջնորդ Տ. Բագրատ Եպս. Գալստանեան իր ցաւակցութիւնները յայտնած էր հեռաձայնային հաղորդակցութեամբ Տ. Զաւէն եւ Տոքթ. Յարութիւն Արզումանեաններու: Կարդացուեցաւ նաեւ ցաւակցական գրութիւն մը ուղարկուած Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին կողմէ, ուր կ՚ըսուէր. «Տիրամայրը ճանչցած ենք որպէս ընտանիքին նուիրուած անձ, ջերմ հոգիով, համբերատարութեամբ եւ հաստատ կամքով: Մեզի համար իր աշխատասիրութիւնն ու տաղանդը յայտնի դարձաւ նոյնիսկ վերջերս, նախքան հիւանդանալը, մեզի նուիրած նորակառոյց եկեղեցւոյս համար իր ձեռքով աշխատած գեղեցիկ Ս. Խորանի ծածկոցները, որոնք անգին յիշատակներ պիտի մնան եւ զարդարեն մեր եկեղեցին»: Տ. Եղիշէ Սրբազան եւ Տ. Գառնիկ քահանայ, երկուքն ալ ողբացեալին մօտէն ծանօթ, իրենց դամբանականներով դրուատեցին Տիրամայր Արզումանեանի անբասիր նկարագիրը, օրինակելի մօր եւ աստուածավախ հաւատացեալի տիպարը: Ողբացեալին զաւակը՝ Տ. Զաւէն Ա. Քահանան իր զգացուած շնորհակալութիւնները յայտնեց Սրբազան Հօր եւ մասնակից հոգեւորականներուն, ինչպէս նաեւ Տիրամօր հիւանդութեան ընթացքին բոլոր օգնողներուն, ու եզրակացուց ըսելով թէ, որքան ալ տխուր է սիրելիի մը մահը, սակայն նոյն ժամանակ, այս օրը կեանքի տօնախմբութիւն մըն է, որովհետեւ լիովին ու մաքուր ապրուած եւ կեանք տուող կեանքի մը հաշուեյարդարն է որ կը կատարենք եւ կը մխիթարուինք անով:

Ողբացեալ Տիրամօր մարմինը ամփոփուեցաւ Ֆիլատելֆիայի Արլինկթըն գերեզմանատան մէջ, իր կողակցին շիրիմին կից:

Հոգեճաշի ընթացքին, հոգեւոր հովիւ Տ. Թադէոս քահանայի խօսքերէն ետք տիկին Եսթէր Կարապետեան կարդաց սրտագեղ ուղերձ մը եւ ապա կարդացուեցաւ ողբացեալին թոռան՝ Տոքթ. Երուանդ Արզումանեանի ուղարկած ցաւակցութեան յուզիչ գրութիւնը:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՏԻՐԱՄԱՅՐ ՍՐԲՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»ի խմբագրութիւնն ու աշխատակազմը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ Արժ. Դոկտ. Տ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեանին, երէցկին Ճոյսին եւ Արզումանեան ընտանիքի բոլոր անդամներուն:

Ձեր Ծանուցումները վստահեցէք «Մասիս» շաբաթաթերթին

# ՎԱՐՊԵՏ ՌԱՖԻ ՇՐՋԱՊԱՏԸ

Շարունակուած էջ 14-էն

- Ես իմ:

- Լինում էլ յուշարձան են պղծել, դա՞րդ անենք:

- Ի՞նչ կարանք, որ անենք: Մենք՝ ըստեղ, իրանք գլոբուսի էն կողմը, առաջ ուրիշ էր: Փուշտայիր, կը լսուէր: Հմի դարը փոխուած ա, զէնքն էլ հետը:

- Էս էլ թյէն ու մէյը, - բանաստեղծը վերադարձաւ:

- Տղերք, հըլը մի հատ ընձի լսէք: Արա, աշխարհը հմի խառն ա, - միջամուխ է լինում վարպետ Ռաֆը, - Իրանը ատոմ ա շինում, ճի՞շտ ա: Հայաստանը պարտքերի մէջ ա: Ատրպէյճանը հաչում ա, պատերազմից ա խօսում: Ո՞ր մէկն ասեմ, արա, ախպեր, հմի ճիշտը չի անցնում: Ջեր արեւը, ըտենց ա:

- Էդ ո՞ր ճիշտը չի անցնում, տղաներ, - բանաստեղծը թափ է առնում, չէք չափում, անցուդարձը շատ կարեւոր է, քրդական հարց կայ:

- Ցեղասպանութեան ճանաչման հարց կայ:

- Մեր խելքի բանը չի: Քաղաքականութիւնը ծանր բեռ ա, մեր քաշի համեմատ չի: Այ, օրինակ ես: Սովետի չեմպիոնատում չորրորդ տեղն եմ բռնել, իսկ որ հայ եմ, առաջ չտարան, մնացի ստուերում: Բա ո՞նց, հմի էլ նոյնն ա: Լաւ է, ձեռներս կարենք, նստենք վրայն, ձեն չհանենք: Գիրք գրէք, գիրք, փիթըր Պալաքեանը տեսա՞ք: Տիգրիսն էլ վառեց, Եփրատն էլ: Տօ սաղ միջագէտքն էլ օր վառի, իրաւունքը կայ, ինքը կարայ, ես ու դու չենք կարայ: Էսի պարզ հաշիւ ա, էրեխու թուաբանութիւն ա:

- Կեցի, ծօ, - փիզիկոսն է միջամտում, - սպասէ, քիչ խօսի, դու մէ բան հաշուի չես առնի, օր մենք դրսում ենք շատ, ներսում ենք քիչ:

- Տղաներ, բարի գիշեր:

- Էս ո՞ւր:

- Ներս:

- Տուն ա էթում, լողանալու վախտն է, մեր ախպերը ժամանակ չունի:

- Մէկ է, վաղը գալու է: Ի՞նչ էիր ասում, վարպետ Ռաֆ:

- Մարդ պտի գլուխ ունենայ, որ յետոյ կարողանայ գովի: Մարդս պտի առողջ ըլնի, կարողանայ իրա լաւն ու վատը ջոկի, որ ասես՝ հալալ ա, արա, արժէ, մեղայ գալուց հեռու ա: Համ էլ մեղք, որ մարդը մեծատառով չի:

- Լաւ ծիծաղը լաւ հարեւանից լաւ ա:

- Այո, երբ որ հարեւանդ չայնիզ ա: Լաւ ա, բա ի՞նչ ա: Լեզուն չգիտես, շփում չունիս, մենակ հայ ես ասում, անցնում: Ինքն էլ՝ քեզ ա հայ ասում: Էստեղի սուրբ օրէնքն ա, մեռնեմ էդ օրէնքին: Ականջներիդ օղ արէք: Հայի բախտը բերելու ա, հօրս արեւ: Արա, քացախով պտի գլուխդ լուանաս, եթէ քոր ա գալիս:

- Եթէ քոր չի գալի՞ս:

- Լաւ, էլի: Պտի հակառակորդիդ մէջքը քսես խալուն, օր պարտուի:

- Թեման փոխէք, - լուսանկարիչի համեստութիւնը հատաւ, - մարգաշխարհի անուանի հայերի մասին գիրք է լոյս տեսել: Քոչարեանն էլ կայ մէջը:

- Հա՞, անակնկալը որսում եմ ես, - շնորհաւորում ենք, վարպետ Ռաֆ, թող բազուկդ չծալուի:

- Ջեռդ չցաւայ, բաբամ:

- Քեզ մեդալ է հասնում, էլ էլ մեր արքայական հնգամարտիկ Վարազդատ Թագաւորի անունով, որ մէկից 17 թշնամի էր նետահարում, թուչում 22 կանգուն, առիւծի բերան պատռում…

- Ըմբիշը մինչեւ չհամոզուի, չի կպնի: Իրա քաշի հետ էլ միշտ եոլա կէթա, եթէ վստահ նոյնիսկ չըլնի: Ապէ, էդ խի՞ յա ձէնդ խզուած, հարբուլ խօ չե՞ս:

- Եմ, բայց թուչնակրիպ չէ, մի վախենայ:

- Արա, ես օր կը պայ, շուտ չեմ լաւանայ, էթամ ձեռներս լուամ: - Գնում է իր առողջութեան մասին խիստ մտահոգուած՝ նախկին մարզին ու մեր օրերու մարզիչը, անգամ Վարազդատ Թագաւորի անունը նրան չփկրկեց զգուշանալուց: Նրա շրջապատում բոլորն են կատակասէր: Նա էլ: Բայց որ առողջութեան մասին հոգին իրենը չի, դա հաստատ է: Երեւի տարիքից է: Երեւի կարիքից: Ի՞նչ իմանաս, մինչեւ հաստատ չիմանաս: Մուհամէդ Ալին էլ ժամանակին պոպոկ էր կոտրում: Հիմա կայծաւելի է նման, մի գլուխ դողդնում է: Կարեւորը շատ չդողալն է: Մնացածը մարդու կենցաղաարութեան գործընթացն է, որը բարեխղճութեան պարագային՝ կը տայ ցանկալի արդիւնք:

- Վերջին լուրերը պրծան, - գնալու ակնարկով խաղաթուղթը բացեց լուսանկարիչը: Ես որ իրօք գնացի: Ով մնում է, ձեզ բարի գիշեր:

- Արի տանեմ, մեքենայով եմ, - ասում է վարպետ Ռաֆը, - չե՞ս լսում:

- Միայն իրեն ես տանելո՞ւ, ընկեր Քոչարեան: - Բա Սե՞րժը, վարչապե՞տը, խորհրդատո՞ւն…

Կատակի կծիկը գլորելով դուրս ենք գալիս սրճարան-գրախանութից: Տարբեր կողմերի վրայ ենք բաժանւում: Հայեր ենք, չէ՞: Կռիլովի առակն է: Ամէն հայ իր ճանապարհն ունի, Սամսոնի սունկ հաւաքելու նման, կ՚ասէր Քրիստինեանը, քո ճամբէն բաց արա, որ սունկ յայտնաբերես, իմ ետեւից մի գայ, ուրիշի ճանապարհը չի տաքացնի: Գրականութեան, մարզաշխարհի, միւս բնագաւառներում էլ այդպէս է:

Մարզիչի ակնարկը յուշեց, որ ժամը տասն անց է: Այդօրուայ համար՝ այդքանը բաւական է: Յաջորդ երեկոյեան կը գանք նորանոր լուրերով, կարծիքներով, կատակներով: Հեռանալուց առաջ էլ միմեանց մաղթում ենք քաջառողջութիւն, բարի երազներ, անխոնջ անդորր, անսպառ հումոր ու յարգանք, պանդխտութեան զգետնում՝ հենց բոլորիս տունդարձի ուղեգորգո վրայ, որը պիտի մի գեղեցիկ օր փռուի Լոս Անճելըսից մինչեւ Երեւան ու Վան: Բարի գիշեր՝ վաղուայ յուսալից ակնկալիքով: Բոլորիս բարի գիշեր, ինչու չէ, նաեւ բարի լոյս ու բարո օր՝ աշխարհի հայեր…



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.

Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովը կը յայտարարէ հարիւրամեակի Կալա-ճաշկերոյթ, տօնելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պանծալի տարեդարձը:

# ՀԲԸՄ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԿԱԼԱ-ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝
**ՌԻՉԸՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ**

ԲԱՆԱԽՕՍ՝
**ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿԵԱՆ**
ՆԱԽԱԳԱՀ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍԱՎԱՐՆԵՐ՝
**ԷՐԻՔ ԿԱՐՍԷԹԹԻ**
ՆԱԽԱԳԱՀ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
**ԹՈՐՈՍ ԵԹԵՆԵՔԵԱՆ**
Հ.Բ.Ը.Մ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՅՈՒՆԻՍ 17, 2006

Universal Hilton Hotel Պանդոկին մէջ:
Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել ՀԲԸՄ-ի գրասենեակը՝ (626) 794-7942 կամ գրել՝ annette@agbuca.org

ՀԲԸՄ-ի 100 ամեակի